ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ

ԵՐԵՎԱՆ
2016

ՀՏԴ 37.0
ԳՄԴ 74.200
ՈՒ 439

ՈՒ 439 Ուղեցույց հանրակրթական ուսումնական հաստատություններում մասնագիտական կողմնորոշման.- Եր.: Տիգրան Մեծ, 2016.- 84 էջ:

Մասնագիտական կողմնորոշման սույն ձեռնարկը նախատեսված է դպրոցների տնօրենների, փոխտնօրենների, սոցիալական մանկավարժների, հոգեբանների, նաև մանկավարժների համար:

Ձեռնարկի նպատակն է աջակցել դպրոցներում մասնագիտական կողմնորոշման համակարգի ներդրմանն ու ծառայությունների իրականացմանը, որոնք պետք է հասանելի լինեն աշակերտներին միջնակարգ կրթության ողջ ժամանակահատվածում: Այն կարող է հանդիսանալ նաև մեթոդական ուսումնաօժանդակ նյութ՝ մասնագիտական կողմնորոշման աշխատանքների իրականացման համար:

Ձեռնարկը տպագրվել է Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) «Մեծ քսանյակի վերապատրաստման ռազմավարության կիրառում: Գործընկերություն ԱՄԿ և Ռուսաստանի Դաշնության միջև» տեխնիկական համագործակցության ծրագրի աջակցությամբ:

Publication was produced with a support of International Labor Organization (ILO) Technical Cooperation Project “Applying the G20 Training Strategy. Partnership of the ILO and the Russian Federation”

ՀՏԴ 37.0
ԳՄԴ 74.200

ISBN 978-99941-0-721-6

© Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն, 2016

«Հանրակրթական ուսումնական հաստատություններում մասնագիտական կողմնորոշման իրականացման ուղեցույցը» մշակվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության «Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Խմբագիր՝ Հակոբ Թադևոսյան, մ.գ.թ., դոցենտ

Կազմեցին՝ Հայկուհի Գևորգյանը
Շահանե Բեգլարյանը

Ձեռնարկի կազմմանը մասնակցեցին
Իրինա Հարությունյանը
Նաիրա Վլասյանը
Քնարիկ Իսրայելյանը

Երաշխավորված է՝
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 20.05.2013 թ. թիվ 72-Ա/Ն հրամանով հաստատված մասնագիտական կողմնորոշման մեթոդական խորհրդի որոշմամբ:

Մեթոդական խորհրդի նախագահ՝
Թադևոս Ավետիսյան, տ.գ.թ., դոցենտ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

2. ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈԴԵԼ 8

2.1 ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ 8

2.2 ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈԴԵԼԻ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ, ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ 16

2.3 ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈԴԵԼԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ 19

3. «ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ» ՄՈԴՈՒԼ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ 1-9-ՐԴ ԵՎ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ 10-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ 31

4. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԽԱՂԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ 45

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթական ուսումնական հաստատության շրջանավարտների առաջնային խնդիրներից մեկը մասնագիտության գիտակցված ընտրությունն է: Ներկայումս, ազատ տնտեսական հարաբերություններով պայմանավորված՝ այն դառնում է առավել արդիական և հրատապ: Նորագույն տեխնոլոգիաների, կրթության և աշխատանքի նոր շուկաների զարգացման պայմաններում շատ մասնագիտությունների և զբաղմունքների համար ներկայացվում են նոր պահանջներ, ծնվում են նոր մասնագիտություններ, որոնց մասին սովորողներն ու նրանց ծնողներն անգամ պատկերացում չունեն: Բացի ոչ բավարար տեղեկատվությունից, կարևոր է նաև հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների նախասիրությունների և անձնային որակների բացահայտումն ու զարգացումը և նախընտրած մասնագիտության համադրումը աշխատաշուկայի ներկա և կանխատեսվող պահանջարկի հետ: Մասնագիտության ընտրությունից հետո հաջորդ կարևոր խնդիրը մասնագիտական ուսումնական հաստատության ընտրությունն է:

Այս ուղղություններով տեղեկատվախորհրդատվական աշխատանքները սովորողներին կօգնեն ընտրությունը կատարելու գիտակցված՝ դրանով իսկ ստեղծելով կարիերայի համար կայուն հիմքեր, նպաստելով աշխատանքային գործունեության մեջ ներդաշնակության ապահովմանն ու մրցունակ, պահանջված մասնագետ լինելուն: Անձի մասնագիտական ուղղվածության ու կարողությունների բացահայտման աշխատանքները պետք է սկսել նախադպրոցական տարիքից՝ կողմնորոշման գործընթացի սուբյեկտ դիտարկելով ոչ թե միայն խորհրդատու մասնագետին, այլ ներառելով բոլոր ուղղակի և անուղղակի ազդեցություն ունեցող անձանց՝ առարկայական ուսուցիչներ, մանկավարժներ, հոգեբաններ, ծնողներ, գործատուներ:

Մասնագիտական կողմնորոշման հիմնահարցերը հասարակական հետաքրքրության են արժանացել միայն 19-րդ դարի վերջերից:

Այն հանգամանքը, որ իր ընդունակություններին համապատասխան մասնագիտություն և աշխատանք ընտրած անհատը ավելի մեծ օգուտ է բերում իրեն և հասարակությանը, հիմք է դարձել մասնագիտական կողմնորոշման, մասնագիտության ընտրության գործընթացների գիտական հիմնավորման, մեթոդաբանության մշակման անհրաժեշտության համար: Մի կողմից դա աշխատաշուկայի, զբաղմունքների, մասնագիտությունների, մասնագիտական կրթության համակարգի ուսումնասիրության հարց է, մյուս կողմից՝ անձի անհատականության, նրանց հետաքրքրությունների, ցանկությունների, հակումների և ընդունակությունների ուսումնասիրման մեթոդների, դրանցով ստացված տվյալների հիման վրա նպատակահարմար ու պրոֆեսիոնալ խորհրդատվության իրականացման համակարգի ստեղծման ու կիրառման:

20-րդ դարի 50-60-ական թվականներից Արևմուտքի մի շարք երկրներում ներդրվեց սովորողների մասնագիտության ընտրությանը նախապատրաստելու առավել առաջավոր համակարգ, որում ներգրավված էին հանրակրթական, մասնագիտական ուսումնական հաստատությունները և մասնագիտական կողմնորոշման կենտրոնները: Հանրակրթական ուսումնական հաստատությունների մանկավարժները մասնագիտացված կենտրոնների մասնագետների ղեկավարմամբ իրականացնում էին սովորողների մասնագիտական կողմնորոշում, կազմում յուրաքանչյուրի դիտարկումների վրա հիմնված բնութագրեր և ուղղորդում համապատասխան խորհրդատվությամբ:

Զարգացման ինչ-որ փուլում քննարկվող հիմնախնդիրը դուրս եկավ սովորողների հետաքրքրության շրջանակներից, ընդլայնեց իր մասշտաբները: Ընդլայնվեց նաև մասնագիտական կողմնորոշման գործընթացի օբյեկտի շրջանակը, նրանում ընդգրկվեցին տարիքային և սոցիալական ամենատարբեր խմբեր: Աստիճանաբար մասնագիտական կողմնորոշման հիմնախնդիրը դարձավ նաև անդրագոգների՝ մեծահասակների կրթության մասնագետների գործունեության և հետազոտությունների առարկա: Տարբեր երկրներում

գործում են մասնագիտական կողմնորոշման և մասնագիտական խորհրդատվության տարբեր համակարգեր: Այդ նպատակով ստեղծված կենտրոններն անընդհատ հավաքագրում են տվյալներ մասնագիտությունների սոցիալական, հոգեբանական, մանկավարժական և առողջապահական վերլուծությունների վերաբերյալ, ստեղծում են տեղեկատվության տարածման տարբեր միջոցներ՝ գրքեր, ծալաթերթեր, պարբերականներ և էլեկտրոնային կայքեր:

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈԴԵԼ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Յուրաքանչյուր մարդ իր տարիքային սոցիալական զարգացման գործընթացում առնչվում է մասնագիտության ընտրության խնդրին: Հարցի լուծումը շատ կարևոր է ոչ միայն անձի, այլև, ընդհանուր առմամբ, հասարակության համար: Հանրակրթության ոլորտում մասնագիտական կողմնորոշումը ուսուցման ու դաստիարակության գործընթացների անբաժան մասն է, որոշակի առումով նաև մանկավարժական գործընթացի օրգանական և բնականոն շարունակությունը, հանրակրթության տրամաբանական ավարտը: Մասնագիտության ընտրության հարցում խորհրդատվությունը նպատակ ունի ապագա մասնագիտության համար առավել անհրաժեշտ առարկաների ավելի խորը ուսումնասիրությանը, նաև նախադրյալներ ստեղծելու աշխատանքային միջավայրին, մասնագիտությանը արդյունավետ հարմարմանը, այլ նաև ապագայի նկատմամբ տեսանկյունից վստահության ձևավորմանը:

Մասնագիտական կողմնորոշումը գիտականորեն հիմնավորված սոցիալ-տնտեսական, հոգեբանամանկավարժական, բժշկաֆիզիոլոգիական գործընթաց է, որը կոչված է նպաստելու անձի կողմից մասնագիտության գիտակցված ընտրությանը և կարիերայի պլանավորմանը՝ բացահայտելով և զարգացնելով վերջիններիս անհատական հոգեբանական առանձնահատկությունները, հետաքրքրություններն ու հակումները, ինչպես նաև ձևավորել աշխատանքի նկատմամբ դրական վերաբերմունք շուկայական հարաբերությունների պայմաններում: Այն ենթադրում է մանկավարժության, հոգեբանության, սոցիալական աշխատանքի շրջանակներից դուրս,

առավել ընդգրկուն համալիր աշխատանքներ՝ ուղղված մասնագիտության գիտակցված ընտրությանը և կարիերայի պլանավորմանը:

Հոգեբանամանկավարժական կողմը ենթադրում է սովորողների տարիքային, անհատական հոգեբանական առանձնահատկությունների, ընդունակությունների, նախասիրությունների, հետաքրքրությունների, հակումների բացահայտում և մասնագիտական ինքնորոշում:

Սոցիալ-տնտեսական կողմը սովորողների մասնագիտության ընտրության ուղղորդման գործընթացն է աշխատաշուկայի պահանջարկին համապատասխան:

Բժշկաֆիզիոլոգիական կողմը լուծում է այնպիսի հիմնախնդիր, ինչպիսին է սովորողների ֆիզիկական առողջության և նախընտրած մասնագիտության համատեղելիությունը:

Մասնագիտական կողմնորոշման աշխատանքները հանրակրթական ուսումնական հաստատություններում պետք է իրականացվեն ուսումնադաստիարակչական գործընթացում, նաև արտադասարանական աշխատանքների ժամանակ:

Հանրակրթության ոլորտում մասնագիտական կողմնորոշման ծառայությունների հիմնական նպատակը սովորողների կողմից մասնագիտության գիտակցված ընտրությանը նպաստելն է, ինչը հնարավոր է ձեռք բերել հետևյալ խնդիրների լուծման արդյունքում՝

- տրամադրել տեղեկատվություն և խորհրդատվություն սովորողի նախասիրություններին, հակումներին, անձնային որակներին և աշխատաշուկայի պահանջարկին համապատասխան,
- ձևավորել աշխատանքի և հասարակական հարաբերությունների նկատմամբ համարժեք վերաբերմունք,
- նպաստել կարիերայի պլանավորման և ձեռնարկատիրական գործունեության միջոցով ինքնազբաղվածության ապահովմանն ուղղված գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմանը,
- հոգեբանամանկավարժական դիագնոստիկ մեթոդներով բացահայտել սովորողների անհատական հոգեբանական առանձ-

նահատկությունները՝ իմացական գործընթացների առանձին հատկանիշները, խառնվածքը, բնավորությունը, ընդունակությունները, նախասիրությունները, հակումները, հետաքրքրությունները, պահանջմունքները, դրդապատճառները,

- կազմակերպել և անցկացնել խմբային դասընթացներ՝ ուղղված կարիերայի պլանավորման հմտությունների զարգացմանը,
- խոցելի սոցիալական խմբերի սովորողների հետ անցկացնել անհատական աշխատանք՝ ուղղված աշխատաշուկա մուտք գործելու խոչընդոտների բացահայտմանն ու դրանց հաղթահարմանը,
- ձևավորել համագործակցության ճկուն համակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների (արհեստագործական, միջին և բարձրագույն մասնագիտական), ինչպես նաև գործատուների, զբաղվածության և համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների, շահագրգիռ այլ կառույցների միջև:

Տարբեր տեսաբաններ տարբեր կերպ են բնութագրում մասնագիտական կողմնորոշման ծառայությունների շրջանակն ու իրականացման մեթոդները: Սակայն պետք է փաստել, որ սկզբունքները միասնական են: Ուստի, կիրառել այս կամ այն տեսությունը, պահպանել ծառայությունների իրականացման մեթոդների որոշակի հաջորդականություն, պարտադիր պայման չէ: Մասնագիտական կողմնորոշման իրականացման սկզբունքների առաջնահերթությունները պայմանավորված են անձի կրթական պահանջմունքներով և կարիքներով: Այդ պահանջմունքներից և կարիքներից էլ բխում է մասնագիտական կողմնորոշման ծառայության իրականացման կոնկրետ մեթոդի կիրառումը:

Ծառայությունների շրջանակն ընդգրկում է երեք հիմնական ուղղություն՝ տեղեկատվության տրամադրում, խորհրդատվություն և կողմնորոշում:

Տեղեկատվության. տրամադրում ճշգրիտ և թարմ տեղեկատվության փոխանցում մասնագիտության ընտրության և կարիերայի

(մասնագիտության, մասնագիտական ուսումնական հաստատության, զբաղմունքի, աշխատատեղի, ձեռնարկատիրական գործունեություն սկսելու և այլնի) հնարավորությունների, մասնագիտական առաջխաղացման ուղիների և ընտրության ենթակա հնարավոր տարբերակների, ինչպես նաև անհրաժեշտ աջակցություն և խորհրդատվություն որոնելու և գտնելու վերաբերյալ:

Խորհրդատվություն. հոգեբանամանկավարժական տարբեր մեթոդների կիրառմամբ անձին տրամադրվող աջակցություն է ստացված տեղեկատվությունը ի մի բերելու, հասկանալու, մեկնաբանելու, գնահատելու և այն որոշակի իրադրության մեջ համապատասխանաբար կիրառելու հարցերում:

Կողմնորոշում. անաչառ և անկողմնակալ կողմնորոշման ծառայություն և մասնագիտական աջակցություն՝ նպատակ ունենալով օգնել անձին ինքնորոշվել, հասկանալ ու իր անձնային հնարավորությունների և նախասիրությունների անհամապատասխանության պատճառները, հաղթահարել ու խոչընդոտները կոնֆլիկտները լուծել, ու ձեռք բերելու նոր տեսակետներ և ունենալ առաջընթաց:

Մասնագիտական կողմնորոշման գործընթացի բաղադրիչներից հատկապես կարելի է առանձնացնել՝

1. Մասնագիտական իրազեկումը, որը ներառում է մասնագիտությունների և զբաղմունքների, աշխատաշուկայի, կրթություն ստանալու հնարավորությունների և պայմանների մասին տեղեկատվության տարածումը:

2. Մասնագիտական հետազոտումը, որը մասնագիտական կողմնորոշման ծառայությունների նպատակով անձի ուսումնասիրումն է: Այս գործընթացում բացահայտվում են անձնային առանձնահատկությունները, արժեքային կողմնորոշումները, հետաքրքրությունները, ընդունակությունները, կարիքները, մասնագիտական նախնական ուղղորդվածությունը:

3. Մասնագիտական խորհրդատվությունը, որը նպատակ ունի բացահայտել անձի անհատական առանձնահատկությունների և այս կամ այն զբաղմունքի/մասնագիտության պահանջների հա-

մապատասխանությունը: Արդյունքում սովորողը պետք է սպառիչ պատասխաններ ստանա իրեն հետաքրքրող մասնագիտության, այդ մասնագիտությամբ կրթություն ստանալու հնարավորություններ-ի և իր անհատական հոգեբանական առանձնահատկություններին համապատասխանության վերաբերյալ: Այս գործընթացի արդյունավետության ապահովման նպատակով կարելի է կազմակերպել այցելություններ տարբեր աշխատատեղեր, հանդիպումներ տարբեր մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների և դասախոսների հետ, մասնակից դարձնել մասնագիտական կողմնորոշման նպատակով կազմակերպած միջոցառումների, հանդիպումների և այլն: Այս փուլում, ընդհանրացնելով մասնագիտական նախնական դիագնոստիկայի արդյունքները և տեղեկատվության հիման վրա ստեղծված պատկերացումները, յուրաքանչյուր անձին տրամադրվում է մասնագիտական խորհրդատվական եզրակացություն:

4. Մասնագիտական ընտրությանը, որի նպատակն է բացահայտել անձի մասնագիտական համապատասխանությունը, պիտանելիությունը այս կամ այն մասնագիտությանը, աշխատատեղին, զբաղմունքին, մարդու հարմարվողականության մակարդակը կոնկրետ աշխատանքին, զբաղմունքին:

5. Սոցիալ-մասնագիտական հարմարումը ակտիվ գործունեության միջոցով անձի հարմարումն է սոցիալական նոր միջավայրին, աշխատանքի պայմաններին և կոնկրետ մասնագիտությանը: Մասնագիտական հարմարեցման փուլի հաջողությունը մասնագիտական կողմնորոշման աշխատանքների, մասնագիտության գիտակցված ընտրության արդյունավետության գնահատման գլխավոր չափանիշներից մեկն է:

6. Մասնագիտական դաստիարակությանը անձի մեջ ձևավորում է պարտավորվածության, պատասխանատվության զգացումներ, ինքնուրույն որոշում կայացնելու, ընտրություն կատարելու կարողություններ:

Մասնագիտական կողմնորոշումն անմիջականորեն կապված է

անձի արժեքային կողմնորոշումների հետ, որոնցում հավասարապես ներառվում են և՛ անհատական, և՛ հասարակական արժեքները: Յուրաքանչյուր անհատ ձգտում է ընդօրինակել այն արժեքները, որոնք առավելապես համապատասխանում են իր նպատակներին և հետաքրքրություններին:

Մարդու մասնագիտական գործունեությանը վերագրում են հետևյալ արժեքները՝

- ինքնահաստատում հասարակության մեջ և սոցիալական միջավայրում,
- հեղինակություն աշխատավայրում, մասնագիտական շրջանակներում,
- ծանոթների, ընկերների կողմից ճանաչում,
- ինքնադրսևորում և ինքնակատարելագործում, ինքնաբավարարվածություն,
- իմացություն, կարողություններ և հմտություններ, աշխատանքի նկատմամբ ստեղծագործական մոտեցում,
- քննադատական մտածողություն,
- նյութական արժեքներ,
- սոցիալական դիրք, կարիերայի, առաջխաղացման հնարավորություն, անձի պահանջմունքների բավարարվածություն:

Այսպիսով՝ մասնագիտական կողմնորոշման աշխատանքներում կարևոր նախապայման է անձի դիագնոստիկան, ստացված տվյալների վերլուծությունը, ինչի հիման վրա խորհրդատու-մասնագետը կազմում է նրա հետ աշխատանքի անհատական ծրագիրը: Վերջինս, բնականաբար, կընձեռի առավել հասցեական և նպատակային խորհրդատվության հնարավորություն:

Նպատակահարմար է մասնագիտական կողմնորոշման աշխատանքի անհատական և խմբային ձևերի կիրառումը՝ տարիքային առանձնահատկությունների հաշվառմամբ: Օրինակ՝ հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների համար անհրաժեշտ է տարանջատել տարրական, հիմնական (երկու տարիքային խմբերում) և ավագ դպրոցի աշակերտներին կամ նրանց խմբա-

վորել ըստ կարիքի կամ խորհրդատուի աշխատանքի նպատակի, օրինակ՝ ըստ կարիքների բացահայտման, մասնագիտության ընտրության խորհրդատվության, մասնագիտական ուսումնական հաստատությունների մասին տեղեկատվության տրամադրման, մասնագիտական կարողությունների զարգացման և այլն: Անհատական խորհրդատվության դեպքում կարելի է կիրառել դիտման, թեստավորման, անկախ բնութագրերի վերլուծության, հարցազրույցի և/կամ զրույցի մեթոդները: Օրինակ՝ անկախ բնութագրերի վերլուծության ժամանակ մասնագետը ուսումնառողի մասին իր ամփոփիչ նկարագիրը կազմելու համար կարծիքներ է հավաքում դասավանդողներից, ընկերներից, նաև ծնողներից՝ նրան դիտելով շրջապատող միջավայրում: Դիտման արդյունքները պետք է դրվեն խորհրդատուի կազմած նկարագրի հիմքում: Թեստավորումը ենթադրում է անձի կողմից մասնագիտության նախնական ընտրության և անձնային որակների չմիջնորդավորված բացահայտում: Այս մեթոդի կիրառման համար մշակվում և գործածվում են առանձին թեստեր: Խորհրդատվական և տեղեկատվական զրույցը պետք է ունենա թեմատիկ ուղղվածություն և կարող է անցկացվել դպրոցի տնօրենի, ուսուցիչների, դասղեկների, սովորողների ինչպես նաև ծնողների հետ: Զրույցը կարող են վարել ամենատարբեր ոլորտների մասնագետներ: Զրույցի թեմաները մասնագիտություններն են, դրանց առանձնահատկությունները, մասնագիտական հմտությունների և կարողությունների ձեռքբերման յուրահատկությունները, պայմանները:

Աշակերտներին մասնագիտական կողմնորոշման ծառայությունների արդյունք է՝

- սովորողին անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովումը և ուղղորդումը,
- սովորողի կողմից նախընտրած մասնագիտության հիմնավորումը,
- աշխատանքի նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորումը,

- սովորողի ինքնորոշումը,
- կարիերայի պլանավորման և ձեռնարկատիրական գործունեության մասին առաջնային իմացությունը:

Մասնագիտական կողմնորոշման ծառայությունների արդյունքը գնահատելի է, եթե առկա են ստորև բերված հիմնական հարցերի պատասխանները՝

- ընտրե՞լ է արդյոք սովորողը մասնագիտություն,
- ի՞նչն է ազդել ընտրության վրա,
- նա ունի՞ համապատասխան տեղեկություն իր նախընտրած մասնագիտության մասին,
- համապատասխանո՞ւմ է այն իր հետաքրքրություններին և հնարավորություններին,
- նախընտրած մասնագիտությունը համապատասխանո՞ւմ է սովորողի ֆիզիկական առողջությանը,
- արդյո՞ք ծնողների կողմից ընդունելի է նրա նախընտրությունը:

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈԴԵԼԻ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ, ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Հանրակրթությունում մասնագիտական կողմնորոշման ծառայությունների իրականացման առաջարկվող մոդելը հիմնված է արդեն գործող ենթակառուցվածքի վրա՝ հիմք ընդունելով ՀՀ ընդհանուր հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը և մանկավարժական աշխատողների պաշտոնների նկարագրերով սահմանված պարտականությունները:

Մոդելի հիմնական նպատակն է հանրակրթական ուսումնական հաստատություններում անկախ տարիքից աշակերտների մասնագիտական կողմնորոշման ծառայությունների համակարգման, կազմակերպման, իրականացման և գնահատման միասնական համակարգի ձևավորումը:

Մոդելի հիմնական խնդիրներն են՝

1. աջակցել հանրակրթական ուսումնական հաստատություններում մասնագիտական կողմնորոշման ծառայությունների իրականացման համապատասխան ենթակառուցվածքի ստեղծմանը,
2. ապահովել ծառայություն իրականացնող մասնագետների/մասնագիտական խմբի շարունակական վերապատրաստումներն ու որակավորման բարձրացումը, մասնագիտական խորհրդատվության անցկացումը,
3. ապահովել մեթոդական աջակցություն՝ առցանց և էլեկտրոնային եղանակներով,
4. աջակցել ծառայությունների իրականացման մշտադիտարկման և գնահատման մեխանիզմների ներդրմանը,
5. նպաստել սովորողների մասնագիտական կողմնորոշման արդյունավետ ծառայությունների իրականացմանը,
6. խրախուսել մասնակցային գործընթացների զարգացմանն ու ներգրավել շահագրգիռ տարբեր կողմերի:

Սկզբունքները

Հանրակրթության ոլորտում մասնագիտական կողմնորոշման ծառայությունների հիմնական սկզբունքներն են՝

1. **Պատասխանատվության կամ պատասխանատու վերաբերմունքի** սկզբունք, որը ենթադրում է նպատակահարմար մեթոդների կիրառմամբ ճշգրիտ դիագնոստիկայի իրականացում և օբյեկտիվ եզրահանգումներ:
2. **Կոմպետենտային մոտեցման** սկզբունք, որը ենթադրում է մասնագիտական կողմնորոշման գործընթացներում մասնագիտական պահանջվող գիտելիքներ ունեցող, համապատասխան կարողությունների, հմտությունների տիրապետող, ըստ կարիքի ճիշտ մեթոդներ կիրառող, մասնագիտական կարողունակություններն անընդհատ զարգացնող մասնագետի ներգրավում:
3. **Ինքնակամության/կամավորության** սկզբունք, որը ենթադրում է մասնագետի մոտ սովորողների այցի կամավորություն, սեփական նախաձեռնության և ցանկության դեպքում անգամ հրաժարվելու համար համապատասխան պայմանների ապահովում:
4. **Գաղտնիության** սկզբունք, համաձայն որի խորհրդատվության արդյունքում ստացված տեղեկատվությունը ենթակա չէ հրապարակման: Այդ մասին տեղեկատվության փոխանցումը երրորդ անձին կարելի է միայն սովորողի համաձայնությամբ:
5. **Ակտիվության** սկզբունքը ենթադրում է, որ խորհրդատվության օբյեկտն ինքն է կայացնում վերջնական որոշումը՝ հիմնվելով մասնագետի տրամադրած տեղեկատվության և խորհրդատվության վրա:
6. **Արդյունքի նկատմամբ դրական տրամադրվածության (բավարարվածության)** սկզբունք, որը ենթադրում է, որ սովորողի անհատական հոգեբանամանկավարժական վերլուծության արդյունքները համադրելի են մասնագիտության համար ներկայացվող պահանջներին, հակառակ դեպքում նպատակա-

հարմար ձևով խորհրդատուն փորձում է համապատասխանեցնել դրանք:

7. **Համակարգվածության** սկզբունքի համաձայն մասնագիտական կողմնորոշման աշխատանքները պետք է իրականացվեն համակարգված, ամբողջական գործընթացի և նրա առանձին բաղադրիչների արդյունավետության բարձրացման նպատակով:
8. **Բարոյական** սկզբունքը ենթադրում է մասնագիտական կողմնորոշման աշխատանքների ընթացքում բարոյական և իրավական նորմերի պահպանում, մարդասիրության դրսևորում:

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈԴԵԼԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Հանրակրթական ուսումնական հաստատություններում մասնագիտական կողմնորոշման միասնական համակարգի ներդրման շրջանակներում նախատեսվում է ձևավորել մասնագիտական կողմնորոշման խորհուրդ, որի հիմնական նպատակն է համակարգել ծառայությունների իրականացման գործընթացը ուսումնական հաստատությունում և դրանից դուրս: Խորհրդի կազմում կարող են լինել ներկայացուցիչներ ուսումնական հաստատության ղեկավար և մանկավարժական կազմից՝ հատկապես մասնագետ մանկավարժներ, ծնողական, աշակերտական խորհուրդներից, ըստ անհրաժեշտության նաև գործընկեր և շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներ (ՏԻՄ, գործատու, զբաղվածության մարզային և տարածքային կենտրոն, մասնագիտական ուսումնական հաստատություն): Խորհուրդը ղեկավարում է տնօրենը կամ նրա կողմից լիազորված անձը (օրինակ՝ տնօրենի՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալը):

Խորհրդի հիմնական խնդիրն է պլանավորել, կազմակերպել, մշտադիտարկել և կառավարել ուսումնական հաստատությունում աշակերտներին տրամադրվող մասնագիտական կողմնորոշման ծառայությունների իրականացման ուղղությամբ աշխատանքներն ու միջոցառումները, կապեր հաստատել հաստատությունից դուրս կառույցների և մասնագետների հետ, միջոցառումների ընթացքում ծագած խնդիրներին տալ համապատասխան լուծումներ: Խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոնի կողմից առաջարկվող սույն ուղեցույցի հիման վրա: Խորհրդի կազմում ընդգրկվում են կողմնորոշման գործընթացին առնչվող բոլոր պատասխանատու կողմերն իրենց պարտականություններով: Խորհուրդն ունի իրավունքների, պարտականությունների և գործառույթների իր շրջանակը:

Խորհուրդն իրավունք ունի.

- առաջադրված խնդիրները համատեղ քննարկելու և լուծելու նպատակով, ըստ անհրաժեշտության, իր նիստերին հրավիրելու տարբեր ոլորտների շահագրգիռ անձանց, մասնագետների, գործատուների և մասնագիտական ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների,
- ծառայությունների արդյունավետության բարձրացման նպատակով, տարաբնույթ նախաձեռնությունների և միջոցառումների կազմակերպման վերաբերյալ դպրոցին ներկայացնելու համապատասխան առաջարկություններ,
- Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոնից և համապատասխան այլ կառույցներից ստանալու կրթության և աշխատաշուկայի մասին տեղեկատվություն, մասնագիտական կողմնորոշման մեթոդական նյութեր:

Խորհրդի պարտականություններն են.

- մասնագիտական կողմնորոշման տարեկան պլանների քննարկում և հաստատում,
- դպրոցում մասնագիտական կողմնորոշման ռեսուրս կենտրոնի ստեղծում,
- մեթոդաբանության վերաբերյալ նյութերի պարբերաբար թարմացում,
- սովորողներին ուսումնական հաստատություններին ծանոթացնելու նպատակով հանրային միջոցառումների կազմակերպում,
- ուսուցիչների, մանկավարժ-մասնագետների համար սովորողների մասնագիտական կողմնորոշման գործընթացին վերաբերող թեմաներով պարբերաբար դասախոսությունների, գործնական կարողությունների ձևավորման պարապմունքների անցկացում,
- ԶԼՄ-ներով պարբերաբար տեղեկատվության տարածում, մասնագիտական կողմնորոշման գործընթացների լուսաբանում,
- հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորող-

ների, նրանց ծնողների, ուսուցիչների և այլ շահագրգիռ կողմերի համար դասախոսությունների, ինտերակտիվ քննարկումների, զրույցների, ցուցադրությունների, էքսկուրսիաների, բաց դռների օրերի պարբերաբար կազմակերպում և անցկացում,

- միջոցառումների և քննարկումների պարբերական անցկացում ուսումնական հաստատությունների, զբաղվածության տարածքային կենտրոնների, մասնագիտական կրթություն իրականացնող հաստատությունների և մասնագիտական կողմնորոշման կենտրոնների միջև,
- պարբերաբար (կիսամյակը մեկ) կատարած աշխատանքների վերլուծություն:

Մասնագիտական կողմնորոշման խորհրդի կազմում կարող են լինել՝

- մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալը,
- դպրոցում կողմնորոշման ռեսուրս կենտրոնի պատասխանատու անձը (գործառույթը կարող է իրականացնել նեքոնշյալ մասնագետներից մեկը),
- սոցիալական մանկավարժը,
- մանկավարժ-հոգեբանը,
- հատուկ մանկավարժները,
- հատուկ հոգեբանը,
- գրադարանավարը,
- բուժաշխատողը,
- ծնողական խորհրդի նախագահը,
- դասղեկները,
- աշակերտական խորհրդի ներկայացուցիչը,
- մանկավարժական խորհրդի ներկայացուցիչը,
- գործատուները,
- մասնագիտական կողմնորոշման ծառայություններ իրականացնող մասնագետները:

Ծառայություններ և ռեսուրս կենտրոն

Հանրակրթական ուսումնական հաստատություններում, սույն մոդելի համաձայն, առաջարկվում է ծառայությունների իրականացման երեք ուղղություն՝

- խմբային,
- անհատական,
- ինքնասպասարկման:

Խմբային ծառայություններն իրականացվում են սոցիալական մանկավարժի, դասղեկի և/կամ մանակավարժ-հոգեբանի կողմից՝ յուրաքանչյուր տարիքային խմբում՝ պարտադիր և կամընտրական (արտադասարանական) աշխատանքների միջոցով:

Անհատական աշխատանքներն իրականացվում են սոցիալական մանկավարժի, մանակավարժ-հոգեբանի կողմից: Անհատական ծառայություններից հիմնականում օգտվում են այն աշակերտներն ու նրանց ծնողները, ովքեր դրա կարիքն ունեն:

Ինքնասպասարկման ծառայությունները ներառում են մասնագիտական կողմնորոշման նպատակով ամենատարբեր միջոցներով /գրադարանից, առցանց/ տեղեկատվության ինքնուրույն ձեռք բերման հնարավորությունները:

Սույն ուղեցույցով, փորձնական ծրագրի շրջանակներում, նախատեսվում է մասնագիտական կողմնորոշման աշխատանքներն իրականացնել արտադասարանական աշխատանքների միջոցով՝ պարտադիր և կամընտրական: Յուրաքանչյուր հանդիպման տևողությունը կախված է համապատասխան թեմայի մոդուլով սահմանված ժամանակահատվածից:

Մասնագիտական կողմնորոշման ծառայությունների իրականացման նպատակով վերապատրաստված մասնագետներին դպրոցում անհրաժեշտ է տրամադրել համապատասխան տարածք (ցանկալի է՝ առանձնացված)՝ հագեցած նյութատեխնիկական բազայով, անհրաժեշտ ռեսուրսներով և հարմարություններով:

Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, մի շարք երկրներում հանրակրթական ուսումնական հաստատություններում հատկացված

են մասնագիտական կողմնորոշման ծառայությունների իրականացման հարմարավետ սենյակներ (կողմնորոշման ռեսուրս կենտրոն)՝ համալրված անհրաժեշտ բոլոր ռեսուրսներով, սարքավորումներով: Կողմնորոշման ռեսուրս կենտրոնի այցելուների մուտքն ապահովելու նպատակով ընտրվում է պատասխանատու անձ, ով անհրաժեշտության դեպքում նաև նրանց ուղղորդում է: Ռեսուրս կենտրոնի աշխատանքները համակարգվում են շաբաթական նախատեսված աշխատանքային գրաֆիկով: Յուրաքանչյուր մասնագետ համապատասխան մեթոդաբանությամբ և նախատեսված ժամկետներում իրականացնում է իր գործառույթները, որի մասին նաև գրառումներ է կատարում՝ հաջորդ մասնագետներին փոխանցելու նպատակով: Ռեսուրս կենտրոնը տալիս է նաև ինքնասպասարկման հնարավորություն և իր բոլոր հարմարություններով նախատեսված է ինչպես աշակերտների, այնպես էլ ծնողների և մասնագետների համար:

Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների և նրանց ծնողների համար մասնագիտական կողմնորոշման անհատական ծառայություններից օգտվելու հասանելիությունն ապահովելու նպատակով առաջարկվում է հնարավորության դեպքում դպրոցում առանձնացնել սենյակ, որը հարմարեցված կլինի անհատական զրույցների, տեղեկատու նյութերից (թղթապանակներ, գրքեր և այլ ռեսուրսներ), ինչպես նաև համակարգչից օգտվելու համար: Սակայն հաշվի առնելով հանրակրթական հաստատություններում առկա խնդիրները՝ կապված տարածքների բեռնվածության և ռեսուրսների սղության հետ, սույն մոդելի շրջանակներում մասնագիտական կողմնորոշման ռեսուրս կենտրոնի գործառույթների համար կարող է օգտագործվել նաև դպրոցի գրադարանի տարածքը, ինչը կնպաստի նաև գրադարանի դերի բարձրացմանը: Առաջարկը հիմնավորվում է նրանով, որ գրադարանի մի շարք գործառույթներ պետք է ուղղված լինեն աշակերտների շրջանում հետաքրքրությունների բացահայտմանն ու զարգացմանը, մասնագիտությունների և զբաղմունքների մասին ճանաչողության ընդլայնմանը՝ ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքների միջոցով:

Հաշվի առնելով, որ մասնագիտական կողմնորոշման ռեսուրս կենտրոնի աշխատանքները բազմագործառնական են, առաջարկվում է այն զինել համապատասխան ռեսուրսներով և տեղեկատվական բազայով (մասնագիտությունների նկարագրիչներ, զբաղմունքների դասակարգիչ, համապատասխան գրականություն, համակարգչային հնարավորություններ, տեսաֆիլմեր դիտելու հնարավորություններ և այլն): Դպրոցի մասնագիտական կողմնորոշման ռեսուրս կենտրոնի պատասխանատու անձը պետք է ապահովի աշակերտների, ծնողների և շահագրգիռ այլ անձանց ներգրավումը մասնագիտական կողմնորոշման աշխատանքներում, նրանց օժանդակի անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու հարցում, անհրաժեշտության դեպքում հրավիրի համապատասխան մասնագետ կամ նշանակի մասնագետի հետ հանդիպում:

Մասնագիտական կողմնորոշման ռեսուրս կենտրոնի կողմից մատուցվող ծառայությունների հիմնական խնդիրներն են.

1. Աշխատաշուկայում պահանջված մասնագիտությունների ներկայացում,
2. Մասնագիտական կրթական ծառայություններ մատուցող հաստատությունների, ընդունելության կարգի, պայմանների ներկայացում,
3. Դպրոցականների անհատական հոգեբանական առանձնահատկությունների, նախասիրությունների բացահայտում,
4. Ավագ դպրոցում մասնագիտական հոսքերի ընտրության հարցում աջակցություն,
5. Օժանդակություն ավարտական դասարանի սովորողներին իրենց ապագա մասնագիտության ընտրության հարցում,
6. Ճանաչողական այցերի կազմակերպում ուսումնական հաստատություններ, հիմնարկ ձեռնարկություններ, աշխատավայրեր, մասնակցություն բաց դռների օրերին, կլոր սեղաններին, համապատասխան խաղերի անցկացում, օրինակ՝ «Իմ կյանքի նպատակները» թեմայով,
7. Երեխայի կողմից մասնագիտության ընտրության հարցում

կողմնորոշվելու վերաբերյալ խորհրդատվական աշխատանքներ ծնողների հետ:

Ռեսուրս կենտրոնի հիմնական գործառույթներն են.

1. մասնագիտական կողմնորոշման իրազեկման, դիագնոստիկ և խորհրդատվական աշխատանքների իրականացում,
2. աշակերտների, ուսուցիչների, ծնողների, մասնագետների և պատասխանատու այլ անձանց համար տեղեկատվական և ուղղորդման աշխատանքների իրականացում,
3. աշակերտների հետաքրքրությունների և հակումների բացահայտում,
4. նյութատեխնիկական ռեսուրսների տրամադրում:

Ռեսուրս կենտրոնի հարմարություններն ու սարքավորումները.

1. ռեսուրս կենտրոնում կենտրոնացված է տեղեկատվություն պետական և ոչ պետական ուսումնական հաստատությունների մասին (նրանց մասնագիտությունների ցանկը, ընդունելության կարգը և ուսուցման գործընթացի ընթացակարգը, ավարտելուց հետո մասնագիտական գործունեության հեռանկարները և այլն), այլ ուսումնական հաստատությունների վերաբերյալ,
2. աշխատաշուկայի վերլուծություն՝ ըստ մարզերի,
3. գրականություն մասնագիտությունների, մասնագիտական ուսումնական հաստատությունների, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացումների հեռանկարների մասին,
4. մասնագիտական կողմնորոշման մեթոդական ուղեցույցներ, կողմնորոշման գործընթացի իրականացման ծրագրերի օրինակ դասղեկների համար,
5. մասնագիտական կողմնորոշման թեմատիկ զրույցների պլան,
6. գույք, որը նախատեսված կլինի կողմնորոշման գործընթացին առնչվող ռեսուրսների համար,
7. տեխնիկական միջոցներ տեսաշարեր ցուցադրելու համար (համակարգիչ, տեսացրիչ (պրոյեկտոր), էկրան, այլն),
8. ուսումնական ձեռնարկներ, գրականություն, ֆիլմադարան,

հանրագիտարաններ, տեղեկատվական գրականություն ծնողների, ուսուցիչների և աշակերտների համար, կողմնորոշման մեթոդական ուղեցույցեր:

Գրադարանի դերը

Հաշվի առնելով, որ առաջարկվող մոդելում կողմնորոշման ռեսուրս կենտրոնը կարող է համադրվել դպրոցի գրադարանի հետ, հարկ է առանձնացնել նաև գրադարանի և գրադարանավարի գործառույթները կողմնորոշման գործընթացում:

Ինչպես գիտենք տպագիր գրքով, ընթերցանությունը մեր օրերում մեծ պահանջարկ չունի դեռահասների և երիտասարդների շրջանում: Այժմ գրականությանը, ընթերցանությանը փոխարինելու են եկել համակարգչային խաղերը, սոցիալական կայքերը, համակարգչով ընթերցանությունը: Ընթերցանությունը դեռահասների շրջանում քարոզելու, նրանց մեջ ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն և դրական դիրքորոշում ստեղծելու նպատակով կողմնորոշման գործընթացում առանձնացվում է նաև գրադարանի դերը՝ գրադարանավարի պատասխանատվությամբ: Վերջինս իր աշխատանքային պարտականությունների շրջանակում պետք է իրականացնի նաև կողմնորոշմանը վերաբերող գրականության ընտրության, խմբավորման և ներկայացման աշխատանքներ:

Կողմնորոշման գրականությունը ընտրվում է հետևյալ սկզբունքով. հետաքրքրությունից՝ հնարավորության, հնարավորությունից՝ մասնագիտության ընտրություն: Այն օգնում է մասնագիտության ընտրության նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու և անձնային առանձնահատկություններին համապատասխան մասնագիտության ընտրությանը նպաստելու հարցերում:

Անձնակազմի որակավորում և տեղեկատվական հոսքերի կառավարում

Մասնագիտական կողմնորոշման համակարգի առանցքային խնդիրներից է տեղեկատվության հասանելիության, միասնական տեղեկատվական շտեմարանի, առցանց տեղեկատվախորհրդատվական ծառայությունների ապահովումը դպրոցականների, նրանց ծնողների, մասնագիտական խմբի անդամների, մանկավարժների համար:

Այս ուղղությամբ խնդիրները դիտարկվում են երկու հարթություններում՝

- մասնագիտական խմբի անդամների կարողությունների զարգացում և տեղեկացվածության մակարդակի բարձրացում,
- սովորողների և նրանց ծնողների իրազեկվածության ապահովում:

Որպես մասնագիտական կողմնորոշման հանրապետական ուսումնամեթոդական կառույց, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում գործող Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոնն իր իրավասությունների շրջանակում կապահովի համապատասխան մեթոդաբանությամբ, կիրականացնի կադրերի շարունակական վերապատրաստում և մասնագիտական խորհրդատվություն, ինչպես նաև կկազմակերպի անհրաժեշտ տեղեկատվական հոսքերի խմբավորում և տարածում, հանրային իրազեկում՝ ակտիվորեն համագործակցելով ներգրավված և շահագրգիռ բոլոր կողմերի հետ: Ուսումնամեթոդական աշխատանքների օղակ է դիտարկվում նաև «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կրթության ազգային ինստիտուտը»:

Ծառայությունների իրականացման մեթոդաբանության մշակման, մասնագետների ուսուցման և վերապատրաստման գործընթացներում, ըստ անհրաժեշտության, կնախատեսվեն առցանց ու հեռավար եղանակներով տեղեկատվության փոխանցման և ուսուցման կազմակերպման հնարավորությունները:

Մասնագիտական խմբի անդամների կարողությունների զարգացման գործընթացի կազմակերպումը և կառավարումը.

Մասնագիտական կողմնորոշման հիմնական աշխատանքները կատարվում են հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի, մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալի, սոցիալական մանկավարժի, մանկավարժ-հոգեբանի, դասղեկների կողմից: Այդ աշխատանքների համակարգման գործառույթները կարող են վերապահվել նրանց: Մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ կնախատեսվեն նաև առարկայական դասաժամերին՝ համապատասխան ուսուցիչների կողմից՝ նպատակ ունենալով առարկայի թեմատիկ բովանդակությունը համադրել մասնագիտություններին կամ զբաղմունքներին: Մասնագիտական կողմնորոշման ծառայությունների իրականացումը ենթադրում է հատուկ մեթոդաբանություն, պարբերական վերապատրաստումներ, օպերատիվ տեղեկացվածություն յուրաքանչյուր մասնագետի համար:

Համակարգող մասնագետները պետք է ունենան սոցիալական մանկավարժության, հոգեբանության, ներառական կրթության տեսության և պրակտիկայի, անձի հոգեբանամանկավարժական ուղեկցության և կրթական պահանջմունքների գնահատման վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ, սովորողների հետ անհատական և խմբային աշխատանքներ իրականացնելու կարողություններ, հմտություններ, ինչպես նաև աշխատաշուկայի, մասնագիտությունների և զբաղմունքների վերաբերյալ համակողմանի տեղեկացվածություն:

Մասնագիտական կողմնորոշումը հանրակրթական ուսումնական հաստատություններում կիրականացվի պատասխանատու կողմերի ակտիվ մասնակցությամբ մշակված և լիազոր պետական մարմնի կողմից հաստատված համապատասխան ուսումնական ծրագրով:

Մասնագիտական կողմնորոշման մասնագիտական խմբի անդամների վերապատրաստումների ծրագրերը ևս կմշակվեն պատասխանատու կողմերի փոխգործակցությամբ, լիազոր պետական մարմնի կողմից կմշակվի և կհաստատվի ուսուցումների և վերապատրաստումների ամենամյա ծրագիր:

Աշակերտների և նրանց ծնողների իրազեկվածության ապահովում

Մասնագիտական կողմնորոշման կարիք ունեցող անձը պետք է հնարավորություն ունենա օգտվել տեղեկատվական ծառայություններից ինչպես առցանց տիրույթում, այնպես էլ դպրոցում: Այդ նպատակով Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոնի կողմից կշահագործվի միասնական տեղեկատվական շտեմարան: Մասնագիտական կողմնորոշման ծառայությունների համար անհրաժեշտ շտեմարանը պետք է ներառի տեղեկատվություն տնտեսության ոլորտների և ճյուղերի, զբաղմունքների, մասնագիտությունների և դրանց նկարագրությունների, ինչպես նաև հենակետային ավագ դպրոցների և վարժարանների, մասնագիտական ուսումնական հաստատությունների, դրանցից յուրաքանչյուրում ուսուցանվող մասնագիտությունների, շնորհվող որակավորումների, ընդունելության պայմանների ու արտոնությունների մասին: Միաժամանակ, մասնագիտական կողմնորոշման տեղեկատվական շտեմարանը հնարավորություն կնձեռի գործատուներից և համապատասխան պետական մարմիններից ու հնարավոր այլ աղբյուրներից ստացված տեղեկատվության հիման վրա ձևավորված աշխատաշուկայի պահանջարկը համադրել ընթացիկ և կանխատեսվող տեղեկատվության և պահանջվող մասնագիտությունների գծով աշխատուժի մասին տեղեկատվական շտեմարանի հետ: Այն հասանելի կլինի առցանց՝ բոլոր օգտատերերի համար:

Բացի այդ, Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոնի պաշտոնական կայքէջը հնարավորություն կտա մասնագիտական կողմնորոշման կարիք ունեցող անձանց, նրանց ծնողներին ինքնուրույն ստանալու տեղեկատվություն և խորհրդատվություն՝ կիրառելով ինքնասպասարկման տարբեր գործիքներ. թեստավորման համակարգեր, առցանց խորհրդատվություն, տեղեկատվության բաժանորդագրություն, ֆիլմերի դիտում և այլն:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում կազմակերպվող իրազեկման աշխատանքների կազմակերպումը կիրակա-

նացվի մասնագիտական կողմնորոշման խորհրդի համակարգմամբ՝ ստեղծելով ուղղորդող անկյուն:

Տեղական միջոցառումների, առանձին ծառայությունների մասին տեղեկատվությունը աշակերտներին հասանելի դարձնելու համար նախատեսվում է դպրոցի տեսանելի սրահներից մեկում տեղադրել տեղեկատվական վահանակ: Այն կարելի է թարմացնել շաբաթական մեկ անգամ և որպես պատասխանատու անձ ընտրել աշակերտական խորհրդի ներկայացուցիչներից:

«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ» ՄՈԴՈՒԼ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ 1-9-ՐԴ ԵՎ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ 10-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հանրակրթական (հիմնական և ավագ) դպրոցում մասնագիտական կողմնորոշման գործընթացի և համապատասխան դասընթացի արդյունավետությունն ապահովելու նպատակով ուսումնառության 12 տարիները բաժանել ենք 4 պայմանական շրջանների.

1-4-րդ դասարաններ,

5-7-րդ դասարաններ,

8-9-րդ դասարաններ,

10-12-րդ դասարաններ:

Նման տարանջատման նպատակը պայմանավորված է մասնագիտական կողմնորոշման գործընթացի առանձին բաղադրիչների (մասնագիտական լուսավորում, հոգեբանամանկավարժական դիագնոստիկա, մասնագիտական խորհրդատվություն, մասնագիտության ընտրություն) բովանդակությամբ, նպատակով, խնդիրներով, տրամաբանությամբ և սովորողների տարիքային հոգեբանամանկավարժական առանձնահատկություններով: Անհրաժեշտ է մեր կողմից առանձնացված յուրաքանչյուր շրջափուլում (1-4-րդ, 5-7-րդ, 8-9-րդ, 10-12-րդ դասարաններ) հստակեցնել մասնագիտական կողմնորոշման գործընթացի նպատակը, խնդիրները, բովանդակությունը, մեթոդները, անհրաժեշտ միջոցները: Իհարկե, մասնագիտական կողմնորոշման գործընթացի վերոնշյալ բաղադրիչները համապատասխան չափաբաժիններով կիրառվում են մեր կողմից առանձնացված բոլոր շրջափուլերում: Օրինակ, եթե 1-4-րդ դասարաններում նպատակահարմար է միայն կրտսեր դպրոցականների մասնագիտական լուսավորումը, ինչը ենթադրում է մասնագիտություններին, մասնագիտական գործունեության ոլորտներին ծանոթացում, ապա դա չի նշանակում, որ ավագ դպրոցում չի նախատեսվում դպրոցականներին ժամանակակից, նոր մասնագիտությունների,

ինչպես նաև մասնագիտացումների հետ ծանոթացում:

1. 1-4-րդ դասարաններում մասնագիտական կողմնորոշման նպատակը սովորողներին մասնագիտական գործունեության ոլորտներին, ամենահայտնի մասնագիտություններին ընդհանրականորեն ծանոթացնելն է:
2. 5-7-րդ դասարաններում մասնագիտական կողմնորոշման նպատակը սովորողների անհատական հոգեբանական առանձնահատկությունների բացահայտումն է հոգեբանամանկավարժական դիագնոստիկայի միջոցով:
3. 8-9-րդ դասարաններում մասնագիտական կողմնորոշման նպատակը բացահայատված անհատական հոգեբանական առանձնահատկությունների հիման վրա սովորողներին մասնագիտական խորհրդատվության տրամադրումն է և կարիերայի պլանի կազմում:
4. 10-12-րդ դասարաններում մասնագիտական կողմնորոշման նպատակը սովորողների նախընտրությունների բացահայտման, կարողությունների զարգացման՝ մասնագիտական հոսքերում առանձին առարկաների առավել խորն ուսումնասիրման միջոցով մասնագիտության ընտրության և ինքնորոշման ապահովումն է:

Յուրաքանչյուր շրջափուլում «Մասնագիտական կողմնորոշում» դասընթացն իրականացվում է տարեկան 11, ամսական 1 ակադեմիական ժամով:

Յուրաքանչյուր դասաժամի համար կառուցվում է նկարագիր «Աղյուսակ 1.»-ին համապատասխան: Աղյուսակի տողերը լրացնելու համար ներկայացված է «Բացատրագիր»:

ԱՂՅՈՒՍԱԿ 1.

	Նկարագիր
Թեմա	
Դասերի կամ ժամերի քանակ	1
Տևողություն	45 րոպե
Նպատակ	
Խնդիրներ	_____ _____ _____
Մեթոդներ, մեթոդիկաներ, կազմակերպման ձևեր	_____ _____ _____
Անհրաժեշտ տեխնիկական միջոցներ, նյութեր	Նշել յուրաքանչյուր դասընթացի համար անհրաժեշտ նյութատեխնիկական պարագաները, օրինակ՝ գրիչ, թուղթ, գրատախտակ, համակարգիչ և այլն:

Գործողու-թյուններ և տևողություն		**գործողու-թյուն**	**տևողու-թյուն**	**Մե-թոդ**	**նյութեր, տեխ. միջոցներ**
	1.				
	2.				
	3.				
	4.				
	5.				
Ակնկալվող վերջնար-դյունքներ	_____ _____ _____				

Խորհուրդներ սեմինարավարին	Հաշվի առնելով շահառուների տարիքային հոգեբանական առանձնահատկությունները, դասաժամի տեղը օրվա դասացուցակում՝ խորհուրդ է տրվում կիրառել ակտիվ, փոխներգործուն մեթոդներ: Անհրաժեշտ է ուսումնական նյութը, PP-ներկայացումները կառուցել ու մատուցել դիդակտիկական սկզբունքների (մատչելիություն, զննականություն, գիտակցականություն և ակտիվություն, հաջորդականություն, համակարգայնություն, գիտականություն, անհատական առանձնահատկությունների հաշվառում, ֆոնի և պատկերի, գունային կոնտրաստների ճիշտ համադրություն) հիման վրա, ինչը կնպաստի սովորողների ոչ կամածին ուշադրության ակտիվացմանը, կբարձրացնի նրանց ընկալման ու նյութի յուրացման արդյունավետությունը:

ԸՍՏ ԹԵՄԱՆԵՐԻ ՄՈԴՈՒԼԻ ՄՇԱԿՄԱՆ ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

«Թեմա» տողում հաջորդականությամբ լրացվում են մոդուլի բովանդակությունը արտահայտող թեմաները (կցվում է):

«Նպատակը» տողում պետք է ձևակերպվի տվյալ թեմայով դասի վերջում ձեռք բերվող արդյունքը, որին ցանկանում է հասնել դասընթացավարը իր դասի շնորհիվ, ձևակերպել այն, ինչին նվիրված է լինելու դասը: Դասընթացավարը ներհայեցողաբար ընկալում է դասագործընթացի հնարավոր հետևանքները, արդյունքները: Նպատակը կարելի է դիտել նաև որպես գործունեություն, առանձին գործողություններ (տվյալ դեպքում դասը) հարուցող դրդապատճառներից մեկը: Ձևակերպված նպատակը պետք է լինի հստակ, հասկանալի, ցանկալի արդյունքը նկարագրող, իրատեսական, հասանելի, մատչելի, կոնկրետ, ստուգվող կամ դիագնոսստիկայի տրվող (Նշանակում է, որ առկա են միջոցներ և հնարավորություններ ստուգելու համար, արդյոք ձեռք է բերվել նպատակը: Չափման

չափանիշները լինում են որակական և քանակական): Դասի նպատակը ձևակերպելիս անհրաժեշտ է մատնանշել նրա հիմնական երեք կողմերը՝ ճանաչողական, զարգացնող, դաստիարակչական, որոնք էլ արտահայտվում են խնդիրներում:

Մասնագիտական կողմնորոշման մոդուլի բովանդակությանը համապատասխան թեմաներով դասերի նպատակները ենթադրում են մասնակիցների մոտ նոր գիտելիքների, գործողություններ կատարելու միջոցների մասին պատկերացումների, գիտական գիտելիքների համակարգի, մասնագիտությունների ոլորտների մասին պատկերացումների, գործնական կարողությունների, անձնային որակների բացահայտում և ձևավորում, խորհրդատվության իրականացում: Օրինակ, այն կարելի է կոնկրետացնել հետևյալ ձևով.

- մասնակիցների կողմից օրենքների, հասկացությունների, հատկանիշների, առանձնահատկությունների, … յուրացման ապահովում,
- … մասին գիտելիքների ընդհանրացում և համակարգում,
- … կարողությունների մշակում,
- … մասին գիտելիքների ամրապնդում,
  ընտրություն կատարելու համար … մասին գիտելիքների յուրացման, … կարողությունների, … անձնային որակների ձևավորման ապահովում,
- սովորողների … ոլորտի զարգացում,
- … նկատմամբ դրական վերաբերմունքի, հետաքրքրության ձևավորում,
- … ակտիվության ձևավորում,
- իրականացնել խորհրդատվություն … թեմաներով:

«Խնդիրները» տողում պետք է ձևակերպվեն տվյալ թեմայով դասի ընթացքում առանձին գործողություններ, որոնք կհանգեցնեն ձևակերպված նպատակի ձեռքբերմանը: Դասի նպատակի հիմնական երեք կողմերը՝ ճանաչողական, զարգացնող, դաստիարակչական, արտահայտվում են խնդիրներում, այսինքն՝ խնդիրները կարող են ձևակերպվել դրանց համապատասխան: Դասի խնդիրները

ձևակերպելու համար անհրաժեշտ է օգտագործել բայեր, որոնք ցույց են տալիս գործողություն որոշակի արդյունքով: Օրինակ՝ ուսումնասիրել …, բացահայտել…, ձևավորել…, հաղորդել…, ցուցադրել…, համակարգել…, ներկայացնել…, զարգացնել…:

«Մեթոդներ, մեթոդիկաներ, կազմակերպման ձևերը» տողում պետք է նշել.

1. տվյալ թեմայով դասի նպատակի ձեռքբերման ու համապատասխան խնդիրների լուծման ուղիները, ճանապարհը, դրանց իրականացման հնարները,
2. արդեն փորձարկված գործիքները, կոնկրետ մեթոդի իրականացման տեխնիկական հնարների ամբողջությունը և գործունեության նախօրոք մշակված եղանակը, որն ապահովում է դասընթացավարի կողմից տվյալ դասի համար ձևակերպված նպատակի ձեռքբերումը: Այն, որպես կանոն, լինում է մշակող, ստեղծող հեղինակի անունով,

Թեմայի առանձնահատկություններով, դասի նպատակով ու խնդիրներով պայմանավորված՝ կարելի է ընտրել հետևյալ մեթոդներից մեկը կամ մի քանիսը.

- խոսքային մեթոդներ՝ զրույց, բացատրություն, պատմել, դասախոսություն, ուսումնական բանավեճ,
- զննական մեթոդներ՝ իլյուստրացիա (օգտագործվում են քարտեզներ, պլակատներ, գծանկարներ, PP-ներկայացում, ֆիլմեր), դեմոնստրացիա (օգտագործվում են կոնկրետ բնական վիճակում երևույթների, առարկաների ցուցադրություններ),
- գործնական մեթոդներ՝ վարժություններ, փորձեր, թրենինգներ, ինքնուրույն աշխատանքներ, դերային խաղեր:

Կարելի է առանձնացնել նաև էվրիստիկ (որոնողական), ուսումնական նյութի պրոբլեմային շարադրման մեթոդները:

3. Թեմայի առանձնահատկություններով, դասի նպատակով ու խնդիրներով պայմանավորված՝ կարելի է ընտրել կազմակերպման հետևյալ ձևերը. անհատական, խմբային աշխատանքներ, էքսկուրսիաներ, պրակտիկումներ, սեմինարներ, ֆակուլտա-

տիվներ, խորհրդատվություններ, այցելություններ, հանդիպումներ: Օրինակ՝ այցելություններ արտադրական տարածքներ, գործարաններ, հիմնարկ-ձեռնարկություններ, հանդիպումներ ճանաչված հասարակական, պետական, քաղաքական, մշակույթի, սպորտի, գիտության, արվեստի, ռազմական գործիչների հետ, թրենինգներ սովորողների իմացական գործընթացների, հոգեկան հատկությունների առանձին հատկանիշների, հաղորդակցական կարողությունների զարգացման նպատակով:

«Գործողություններ և փևողություն» տողում պետք է նշել ձևակերպված խնդիրներին համապատասխան առաձին հաջորդական գործողություններ, քայլեր և դրանցից յուրաքանչյուրի համար հստակեցնել տրամադրվող ժամանակը, մեթոդը, մեթոդիկան, յուրաքանչյուր գործողության համար անհրաժեշտ նյութերն ու տեխնիկական միջոցները: Դասական մոտեցմամբ դասը կառուցվում է երեք հիմնական փուլերով, դրանց համապատասխան գործողություններով. ներածական, հիմնական, ամփոփիչ կամ ավարտական: Սակայն, ելնելով մոդուլի յուրահատկություններից, դասի նպատակից ու խնդիրներից, կարելի է գործողությունները կառուցել այլ տրամաբանությամբ: Կարևոր է, դրսևորել ստեղծագործականություն:

«Ակնկալվող վերջնարդյունքներ» տողում պետք է նշել դասի վերջում դասընթացավարի կողմից կանխատեսվող արդյունքները, ակնկալիքները, որոնք նկարագրում են, թե դասի ավարտին ինչ պետք է գիտենա, կարողանա և ինչին պետք է տիրապետի սովորողը: Նշենք, որ վերջնարդյունքները պետք է համապատասխանեն դրված նպատակին և լինեն չափելի:

Հանրակրթական դպրոցում «Մասնագիտական կողմնորոշում» դասընթացների թեմաներ

- Մասնագիտության ընտրության կարևորությունը
- Մասնագիտությունների աշխարհ
- Մասնագիտությունների աշխարհ. մարդ - մարդ
- Մասնագիտությունների աշխարհ. մարդ - տեխնիկա
- Մասնագիտությունների աշխարհ. մարդ - նշանային համակարգ
- Մասնագիտությունների աշխարհ. մարդ - բնություն
- Մասնագիտությունների աշխարհ. մարդ - ստեղծագործական տեսակ
- Նախընտրելի մասնագիտությունների առանձնահատկությունները (յուրաքանչյուր աշակերտ ներկայացնում է իր նախընտրած մասնագիտությունը)
- Ես և իմ ապագա մասնագիտությունը
- Անձի հոգեբանամանկավարժական վերլուծության մեթոդները ու ուղիները
- Անձի հոգեբանամանկավարժական վերլուծության էլեկտրոնային համակարգի ներկայացում
- Անձի մասնագիտական հետաքրքրություններ և հակումներ
- Մասնագիտության ընտրության բանաձևի կարևոր բաղադրիչները (ուզում եմ - կարող եմ - պետք է)
- «Ես»-ի գիտակցումը, սովորում ենք ինքներս մեզ ճանաչել
- Մոտիվացիա/դրդապատճառ. ինչպես գնահատել ու ձևավորել
- Իմ հետաքրքրությունները և նախասիրությունները
- Ուսումնական նախընտրելի առարկաները
- Ինչպիսին եմ ես. իմ դիմանկարը խմբի աչքերով
- Թեստ «Մասնագիտական կողմնորոշման և կարերայի ուղղորդման էլեկտրոնային համակարգ». Ջ.Հոլլանդի թեստի լրացում, արդյունքների ներկայացում

- Մասնագիտությունների աշխարհում իմ տեղն ու դերը
- Կարիերայի պլանավորում ողջ կյանքի ընթացքում
- Կարիերա. մասնագիտական աճ
- «Ինչ, որտեղ, երբ» մասնագիտությունների աշխարհում
- Մարդ և աշխատանք, աշխատաշուկա
- Քո կարիերայի ուղին
- Ծնողների դերը մասնագիտության ընտրության գործընթացում
- Իմ ծնողների մասնագիտությունը
- Ես և ժամանակը. ինչպես պլանավորել, ինչպես նախագծել հետագա անելիքները
- Ինչու՞ են կյանքում անհրաժեշտ սեփական որոշումների, քայլերի, կարծիքների և վարքագծի ընտրության համար պատասխանատվություն ստանձնելու կարողությունները
- Ինչպե՞ս հաղորդակցվել մարդկանց հետ
- Մեդիագրագիտություն. ինչպես ձեռք բերել տեղեկատվություն տեղեկատվական հաղորդակցության միջոցներից
- Ինչ եմ արել կյանքում, ինչ պետք է անեմ հետագայում
- Ովքե՞ր են օժտվածները, տաղանդները, հանճարները. արդյո՞ք բոլորը կարող են լինել այդպիսին
- Բանավեճ (մասնագիտական կողմնորոշմանն ուղղված թեմաներով)
- Ինչ է մասնագիտությունը, մասնագիտացումը, զբաղմունքը, աշխատանքը: Մասնագիտության ընտրության կարևոր գործոնները
- Մասնագիտության գիտակցված ընտրության կարևորությունը
- Մասնագետների առաջարկ և պահանջարկ
- Մասնագիտական կրթություն և աշխատաշուկա
- Ինչ է կարևոր իմանալ նախքան ուսումնական հաստատություն ընտրելը
- Մասնագիտական կրթությունը ՀՀ-ում: ՀՀ կրթության ոլորտի օրենսդրություն

- ՀՀ-ում գործող մասնագիտական ուսումնական հաստատությունները
- Մասնագիտական կրթության հնարավորությունները արտերկրում
- Նախընտրելի մասնագիտությունը կամ մասնագիտական կրթություն ստանալու հնարավորությունների մասին տեղեկատվության հավաքագրում և ուսումնասիրում
- Մասնագիտության ընտրություն, որոշումների կայացում
- Յուրաքանչյուր մասնագիտության հնարավոր բացասական և դրական կողմերը մասնագետի անձի համար
- Նպատակի սահմանում, հնարավորությունների գնահատում, անձի զարգացում
- Իրավիճակի վերլուծություն, իմ կյանքի մեկ աշխատանքային օրը
- Մասնագիտությունների ցուցահանդես, դիմակահանդես
- Մասնագիտության ընտրության գործում հնարավոր խնդիրների քարտեզագրում, խճանկար
- Ձեռներեցություն. ինչ է ձեռներեցության կարողունակությունը և ինչ է ձեռնարկատիրական գործունեությունը
- Մասնագիտական կողմնորոշմանն ուղղված դերային խաղեր. խմբային որոշումների կայացում, աշխատանք և ապագա, ինչպիսին կլինեն մարդիկ ապագայում, ինչ և ինչպիսի՞ մասնագետ կդառնամ
- Հանդիպումներ ճանաչված հասարակական, քաղաքական, մշակութային, զինվորական գործիչների հետ, հաջողված պատմություններ
- Այցելություններ հիմնարկ ձեռնարկություններ, գործարաններ, արտադրամասեր, թանգարաններ, բուհեր, արհեստագործական կազմակերպություններ

ԱՂՅՈՒՍԱԿԻ ՕՐԻՆԱԿ.

	Նկարագիր
Թեմա	**Մասնագիտության ընտրության կարևորությունը**
Դասերի կամ ժամերի քանակ	1
Տևողություն	45 րոպե
Նպատակ	Անձի կյանքում մասնագիտություն ընտրելու անհրաժեշտության հիմնավորումն է ու նրա կարևորության, նշանակության գիտակցության ձևավորումը:
Խնդիրներ	1.Հիմնավորել մասնագիտության ընտրության անհրաժեշտությունն անձի կյանքում, 2.ձևավորել անձի կյանքում մասնագիտության ընտրության կարևորության, նշանակության գիտակցություն, 3.ձևավորել հետաքրքրություն մասնագիտական կողմնորոշման դասաընթացների նկատմամբ:
Մեթոդներ, մեթոդիկաներ, կազմակերպման ձևեր	Զրույց/ քննարկում Իրավիճակի վերլուծություն
Անհրաժեշտ տեխնիկական միջոցներ, նյութեր	Գրատախտակ, թուղթ և գրիչ

Գործողություններ և տևողություն		**գործողություն**	**տևողություն(րոպե)**	**Մեթոդ**	**նյութեր, տեխ. միջոցներ**
	1.	Ողջունում, մասնագիտական կողմնորոշման դասընթացի նպատակի և թեմաների ներկայացում:	5	զրույց	
	2.	Դասի թեմայի նպատակի հստակեցում և ներկայացում	3	զրույց	
	3.	Հարցադրում. «Ինչո՞ւ է կարևոր մասնագիտության ընտրությունը մարդու կյանքում». աշակերտների պատկերացումների վերհանում	15	զրույց	
	4.	Քննարկում. «Ինչպե՞ս ընտրել մասնագիտություն». աշակերտների պատկերացումների վերաբերյալ	15	զրույց	
	5.	Դասի ամփոփում	7	զրույց	
Ակնկալվող վերջնարդյունքներ	Մասնագիտական կողմնորոշման դասընթացի վերաբերյալ պատկերացումների ձևավորում, հետաքրքրությունների բարձրացում և նպատականրին հասնելու մոտիվացիայի խթանում:				

Խորհուրդներ դասընթացավարին	Հաշվի առնելով շահառուների տարիքային առանձնահատկությունները՝ պահպանել դասընթացի ինտերակտիվությունը և շահառուների ներգրավվածությունը՝ հնարավորություն տալով յուրաքանչյուրին դասընթացի շրջանակներում սահմանել նպատակ և գտնել դրանց հասնելու համար այլընտրանքային ուղիներ:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԽԱՂԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Վարժություն «Ժամանակի հեռանկար»

Նպատակը. Կարիերայի պլանի կառուցման գործում աշակերտներին օգնության ցուցաբերումն է՝ գիտակցելով անցյալը, ներկան և ապագան:

Տարիքային խումբ. 14 և բարձր

Տևողությունը. 30 րոպե

Ընթացքը. Դասընթացավարը ներկայացնում է «ժամանակ», «իրադարձություն» հասկացությունների կարևորությունը մարդու կյանքում, զանազան իրադարձությունների փոխադարձ ազդեցությունն ու կապը կյանքի ընդհանուր ընթացքի վրա:

Դասընթացավարը մասնակիցներին հրահանգում է պատկերացնել իրենց կյանքը, անցած ուղին, պատկերել թղթի վրա շրջանների տեսքով անցյալը, ներկան և ապագան: Ոչ մի լրացուցիչ հրահանգ չի տրվում: Մասնակիցներին առաջարկում է, որ հենց իրենք նայեն իրենց նկարներին, գնահատեն ժամանակի մասին պատկերացումների կապը և գրի առնեն այդ մտքերը իրենց թղթերում:

Այնուհետև մասնակիցներին առաջարկում են պատկերացնել իրենց ամբողջ կյանքը, առանձնացնել 5 ամենակարևոր իրադարձությունները՝ էական չէ անցյալից, ներկայից, թե ապագայից: Այս պայմանը հարկավոր է կրկնել մի քանի անգամ, քանի որ մասնակիցների մոտ հարցեր են ծագում ապագայի հետ կապված (ինչպես գրել դրա մասին): Իրադարձությունները պետք է գրել սյունակով, մեկը մյուսի տակ՝ աջ կողմը նախատեսել վարժության վերլուծության համար: Եթե ինչ-որ իրադարձություն շատ տհաճ է կամ ցանկալի չէ հեղինակի համար, կարելի է կոդավորել:

3-5 րոպե հետո դասընթացավարը կրկնում է «Պատկերացրեցի՞ք: Գրեցի՞ք: Իսկ հիմա ևս մի անգամ մտածեք և գրի առեք ևս 5 իրադարձություն ներքևի սյունակով»:

3-5 րոպե աշխատանքից հետո մասնակիցներին առաջարկում են գրել նորից այնքան իրադարձություն, որքան որ նրանք կարող են պատկերացնել, և ժամանակ է հատկացվում այդ առաջադրանքը կատարելու համար:

Այնուհետև մասնակիցներին առաջարկում են իրադարձություններից դեպի աջ գծել 4 նեղ սյունակ սեփական կյանքը վերլուծելու համար:

Առաջին սյունակում մասնակիցներին առաջարկում են գնահատել յուրաքանչյուր իրադարձության **հեռավորությունը** ներկայից. գրել **«+Տ»** նշանով ապագայի իրադարձություն, որտեղ **«Տ»**-այն տարիների թիվն է, որքան տարի հետո այդ իրադարձությունը տեղի կունենա, իսկ **«-Տ»**- անցյալի իրադարձություններ, որտեղ **«Տ»**- քանի տարի առաջ է այդ իրադարձությունը տեղի ունեցել: Հաշվելով բոլոր իրադարձությունների թվաբանական գումարը՝ մենք կարող ենք որոշել հեղինակի «հոգեբանական տարիքը», նրա կողմնորոշումն անցյալի կամ ապագայի վերաբերյալ:

Երկրորդ սյունակում մասնակիցներին առաջարկում են գնահատել այս իրադարձությունների «որակը» իրենց համար՝ **«+5»**-ից **«-5»,** որտեղ **«+5»**-ը շատ ուրախ, հաճելի իրադարձություն է, իսկ **«-5»**-ը մարդու կյանքում ամենատհաճ իրադարձությունն է: Հաշվելով բոլոր իրադարձությունների թվաբանական գումարը՝ մենք կարող ենք որոշել մասնակցի լավատեսության աստիճանը:

Երրորդ սյունակում մասնակիցներին խնդրում են տառով նշել իրադարձության պատճառը կամ աղբյուրը. **«Ե»**-եթե իրադարձության պատճառը մասնակցի սեփական գործողություններն են, **«Ա»**-այլ մարդիկ, իսկ **«Պ»**-պատահար: Այսպես կարելի է որոշել գերակա վերահսկողությունը:

Եվ վերջապես վերջին սյունակում կարելի է վերլուծել իրադարձությունների բովանդակությունը. **«Ա»**-աշխատանք, **«Մ»**-մասնագիտություն, **«Կ»**-անձնական կյանք, **«Ը»**-ընտանիք, **«Հ»**-հասարակական իրադարձություններ և այլն: Մի իրադարձության մեջ կարող է լինել մի քանի նշանակություն: Վերլուծությունը հնարավորություն կտա

հասկանալ՝ կյանքի գործունեությունը որ ոլորտներում է ընթանում:

Այս վարժությունը հնարավորություն է տալիս մասնակիցներին մտածել իրենց կյանքի անցյալի, ներկայի և ապագայի մասին, որպես հեռանկար՝ նոր նպատակների իրականացման քայլեր:

Վարժություն. «Խոչընդոտներ»

Նպատակը. Մասնագիտության ձեռք բերման ուղու հնարավոր խոչընդոտների գիտակցման մակարդակի բարձրացումն ու այդ խոչընդոտները հաղթահարելու միջոցների վեր հանումն է:

Տարիքային խումբ. 14 և բարձր

Տևողությունը. 30 րոպե

Ընթացքը. Վարժությունը ներառում է հետևյալ փուլերը.

- Խմբի հետ համատեղ որոշվում է կոնկրետ մասնագիտական նպատակը (կոնկրետ ուսումնական հաստատություն ընդունվելը, տվյալ հաստատությունն ավարտելը, կոնկրետ աշխատավայրում տեղավորվելը կամ կոնկրետ մասնագիտական ձեռքբերում, այդ թվում՝ կարիերայի ստեղծում և պարգևներ, մրցանակներ ստանալը և այլն):
- Խմբում ընտրում են կամավոր, որը «կներկայացնի» որևէ «կեղծ» մարդու (եթե կամավորը ցանկանա, ապա կարող է ներկայացնել ինքն իրեն): Ինչպես նաև կեղծ մարդու համար անհրաժեշտ է անմիջապես սահմանել նրա հիմնական բնութագրերը. սեռը, տարիքը (ցանկալի է, որ տարիքը համապատասխանի ներկաների մեծամասնությանը, որն էլ խաղը կդարձնի ավելի արդիական մասնակիցների համար), կրթությունը, ընտանեկան կարգավիճակը և այլն: Սակայն այսպիսի հատկանիշներ պետք չէ, որ լինեն չափազանց շատ:
- Ընդհանուր ցուցումներ. «Հիմա յուրաքանչյուրը, ով արդեն գիտի, թե ինչ նպատակի է ձգտում մեր գլխավոր հերոսը (հորինված կամ իրական), պետք է որոշի (կամ հորինի) նրա համար որոշակի դժվարություններ մասնագիտական նպատակի ուղու վրա: Հատուկ ուշադրություն ենք դարձնում այն բանի վրա,

որ դժվարությունները կարող են լինել ինչպես արտաքին, որ այլ մարդկանցից են բխում կամ որևէ հանգամանքից, այնպես էլ ներքին, որ հենց իրենից՝ մարդուց է գալիս (օրինակ՝ մեր գլխավոր հերոսի մոտ)» և հենց այս ներքին դժվարությունների մասին է, որ շատերը մոռանում են: Ցանկալի է որոշել նույնիսկ երկու-երեք նմանատիպ «դժվարություններ/ծուղակներ» այն դեպքում, երբ նման դժվարություններ սահմանեն այլ մասնակիցներ (որպեսզի չկրկնվի): Այդպիսի դժվարություններ առանձնացնելով՝ յուրաքանչյուրը պետք է մտածի այն մասին, թե ինչպես դրանք հաղթահարի: Գլխավոր մասնակցին նաև ժամանակ է տրվում, որպեսզի նա սահմանի մի քանի ավելի հավանական դժվարություններ իր նպատակին հասնելու համար և պատրաստվի պատասխանելու, թե ինչպես է նա պատրաստվում հաղթահարել դրանք:

- Դրանից հետո հերթով յուրաքանչյուրը կասի մի «դժվարություն/ծուղակ», իսկ գլխավոր հերոսն անմիջապես պետք է ասի, թե ինչպես կարելի է այդ դժվարությունը հաղթահարել: Այն մասնակիցը, որն ասել է տվյալ դժվարությունը, նույնպես պետք է ասի, թե ինչպես կարելի է հաղթահարել այն: Դասընթացավարը խմբի օգնությամբ կորոշի (քվեարկության կամ այլ գործընթացի օգնությամբ), թե տվյալ դժվարությունը հաղթահարելու ում տարբերակն է լավագույնը: Հաղթողին կտրվի մրցանակ-«պլյուս» նշանը: Եթե խաղի վերջում գլխավոր մասնակցի մոտ լինի ամենաշատ պլյուսները, ապա նշանակում է, որ նա կարողացել է հաղթահարել իր նպատակին հասնելու հիմնական դժվարությունները:
- Այնուհետև մասնակիցները, ներառյալ գլխավոր հերոսը, իրենց թղթերի վրա գրի են առնում իրենց նպատակին հասնելու ուղու հիմնական դժվարությունները: Հիշեցնենք, որ դժվարությունները լինում են ոչ միայն արտաքին, այլ նաև ներքին (վերջիններս հաճախ լինում են ավելի էական դժվարություններ):

- Յուրաքանչյուրը հերթով ասում է իր դժվարությունը: Եթե պարզվի, որ ինչ-որ դժվարություն ակնհայտ անիրական է, ապա հենց խումբը պիտի որոշի, թե արդյոք քննարկի նման դժվարություն, թե ոչ:

Այս վարժության ընթացքում կարող են հետաքրքիր քննարկումներ լինել, մասնակիցների մոտ հաճախ ցանկություն է առաջանում կիսվելու իրենց կյանքի փորձով և այլն: Անշուշտ, դասընթացավարը պետք է խրախուսի նման փորձի փոխանակումը, սակայն միևնույն ժամանակ հետևի, որ խաղն ընթանա ակտիվ և չխճճվի մանրամասների մեջ:

Վարժություն «Լավագույն մոտիվը»

Նպատակը. Օգնել մասնակիցներին գործնականում հասկանալ մասնագիտության ընտրության իրենց մոտիվը:

Տարիքային խումբը 13 և բարձր

Տևողությունը. 30 րոպե

Ընթացքը. Մեր խնդիրն է ընտրել մասնագիտության ընտրության առավել ճիշտ մոտիվը, այսինքն՝ այն հիմնական պատճառը, որով մարդիկ պետք է առաջնորդվեն իրենց մասնագիտությունն ընտրելիս: Այդ նպատակով դասընթացավարը կարդում է երկուական մոտիվ, մասնակիցները քննարկման միջոցով, հնարավոր է նաև քվեարկությամբ պետք է ընտրեն, թե որ մոտիվն է ավելի լավ:

Մոտիվների ցանկը ներառում է 16 արտահայտություն՝

1. Հայտնի դառնալու և փառքի հասնելու հնարավորություն
2. Հնարավորություն շարունակելու ընտանեկան ավանդույթները
3. Ընկերների հետ ուսումը շարունակելու հնարավորություն
4. Մարդկանց ծառայելու հնարավորություն
5. Աշխատավարձ
6. Կարևորությունը երկրի տնտեսության համար, մասնագիտության հասարակական և պետական նշանակությունը
7. Աշխատանքի ընդունվելու դյուրինությունը
8. Աշխատանքի հեռանկարային լինելը

9. Սեփական հնարավորությունների ցուցադրման հնարավորություն
10. Մարդկանց հետ շփվելու հնարավորություն
11. Գիտելիքներով հարստացումը
12. Բովանդակությամբ բազմազան, տարաբնույթ աշխատանք
13. Մասնագիտության «մեծահոգությունն» ու «ռոմանտիզմը»
14. Աշխատանքի ստեղծագործ բնույթը, բացահայտումներ անելու հնարավորություն
15. Բարդ, դժվար մասնագիտություն
16. Մաքուր, թեթև, հանգիստ աշխատանք

Դասընթացավարը կարդում է 1-ին և 2-րդ, 3-րդ և 4-րդ,... և այլն, 15-րդ և 16-րդ մոտիվները, որից հետո ցանկում մնում է 8 մոտիվ: Նույն կերպ կարդում է նաև այս ցանկը այնքան, մինչև մնա մեկը:

Վարժություն. «Խորհրդատու»

Նպատակը. Մասնակիցներից յուրաքանչյուրի մասնագիտական ապագայի մասին ընդհանրացված պատկերացումների ձեռքբերումն է՝ դասընկերների կողմից խմբային առաջարկությունների հիման վրա:

Տարիքային խումբ. 12 և բարձր

Տևողությունը. 15-25 րոպե

Ընթացքը. Ներառում է հետևյալ քայլերը՝

1. Աշակերտները վերցնում են մաքուր թղթեր:
2. Թղթերը դրվում են ուղղահայաց և բաժանվում 3 հավասար սյուների, կազմվում է աղյուսակ (ստորև բերված օրինակով):
3. Յուրաքանչյուր մասնակից իր աղյուսակում գրում է բոլոր մասնակիցների անուն, ազգանունները դասընթացավարի թելադրությամբ: Կարևոր է, որ բոլոր անունները գրվեն նույն հաջորդականությամբ:
4. Բոլորին տրվում է հանձնարարություն յուրաքանչյուր ազգանվան դիմաց (ներառյալ՝ իրենցը) նշել առավել համապատասխան մասնագիտությունները և ուսումնական հաստատու-

թյունները, որոնք կարելի է խորհուրդ տալ տվյալ մասնակցին: Ցանկալի է ոչ ոքի բաց չթողնել և հանձնարարությանը լրջորեն մոտենալ: Լրացնելու համար տրվում է 7-10 րոպե ժամանակ:

5. Դասընթացավարը սկսում է արդյունքների ամփոփումը: Վերցնում է առաջին թերթիկը, կարդում առաջին ազգանունը, այնուհետև դիմացը գրված մասնագիտությունն ու ուսումնական հաստատությունը: Առաջին մասնակցի համար բոլորի կողմից նշված մասնագիտությունները քննարկելուց հետո անցնում է հաջորդ մասնակիցներին՝ ըստ ցուցակում գրված հաջորդականության:

Աղյուսակ

Աշակերտների անուն, ազգանուն, հայրանուն (համարներով նշված ճշգրիտ հաջորդականությամբ)	Առաջարկվող մասնագիտությունը	Առաջարկվող ուսումնական հաստատությունը կամ աշխատանքի վայրը
1. 2. 3. 4. 5. 6. 7. և այլն		

Դասընթացավարը կարող է խորհուրդ տալ մասնակիցներին ուշադիր լսել ընկերների խորհուրդները, նշումներ կատարել տետրերում:

Վարժությունը կարող է անցկացվել ամբողջ դասարանի հետ, բայց ավելի լավ արդյունքի հասնելու համար նպատակահարմար է այն անցկացնել 12-15 հոգուց բաղկացած խմբի հետ:

Վարժություն «Մասնագիտություն նշված տառով»

Նպատակը. Մասնակիցների՝ մասնագիտության աշխարհի մասին գիտելիքների ընդլայնումն է կամ մասնագիտությունների մասին արդեն գոյություն ունեցող գիտելիքների թարմացումն ու ամրապնդումը:

Տարիքային խումբը. 9 և բարձր

Տևողությունը. 5-15 րոպե

Ընթացքը. Վարժությունն անցկացնելու համար կազմում են շրջան: Նշվում է ցանկացած տառ: Մեր խնդիրն է ցույց տալ, որ գիտենք բազմաթիվ մասնագիտություններ նշված տառով, այսինքն՝ ցույց տալ՝ որքանով գիտենք մասնագիտությունների աշխարհը: Շրջանի մեջ նստած յուրաքանչյուր մասնակից պետք է նշի մեկական մասնագիտություն տվյալ տառով:

Դասընթացավարը ասում է առաջին տառը, իսկ մասնակիցները հերթականությամբ ասում են մասնագիտություններ: Եթե հնչում է մեծամասնությանն անծանոթ մասնագիտություն, դասընթացավարը խնդրում է պարզաբանել, թե ինչի մասին է խոսքը: Եթե մասնակիցը չի կարողանում բացատրել, ապա նշված մասնագիտությունը չի ընդունվում, և քայլը փոխանցվում է հաջորդ մասնակցին: Առավել խիստ պայմանների դեպքում մասնակիցը, ով չի նշել մասնագիտություն, դուրս է մնում խաղից և ժամանակավորապես դուրս է գալիս շրջանից:

Միաժամանակ չպետք է պահանջել մասնակիցներից նշել մասնագիտության պաշտոնական կամ լիարժեք անվանումը: Բավական է միայն, որ նա կարողանա ներկայացնի տվյալ մասնագիտական գործունեությունը և կարողանա պատասխանել պարզաբանող հարցերին:

Այս վարժությունը հնարավորություն է տալիս դասընթացավարին շտկել, փոփոխել աշակերտների պատկերացումները այս կամ այն մասնագիտության վերաբերյալ:

Վարժանք. «Ինքնանկար»

Նպատակը. Բարձրացնել մասնակիցների ունակությունը, հարաբերակցել մարդկանց արտաքին բնութագրերը նրանց մասնագիտության հետ:

Տարիքը. 13 և բարձր

Տևողությունը. 20-40 րոպե

Ընթացքը. Վարժության հիմնական փուլերն են՝

1-ին փուլ. Դասընթացավարը հանձնարարում է խմբի մասնակիցներին նկարել ինքնանկար. նկարը պետք է զբաղեցնի ողջ թուղթը, տեղակայված լինի թղթի կենտրոնում, և պատկերվի միայն դեմքը:

Ցանկալի է ինքնանկարն անել շատ արագ՝ «մեկ շնչով»: Թղթի վրա չնշել անուն ազգանուն:

Եթե մասնակիցներից որևէ մեկն ասում է, որ չի կարողանում նկարել, կարելի է ասել, որ ցանկացած մարդու, հատկապես՝ երեխայի և դեռահասի նկարը հանճարեղ է (այդպես են ասում մեծ նկարիչները): Եթե մասնակիցներից ինչ-որ մեկը հրաժարվում է նկարել ինքն իրեն, ապա պարտադրել պետք չէ, իսկ եթե նրանց թիվը մեծ լինի, խաղը պետք է դադարեցնել:

Դասընթացավարը իր մոտ է հավաքում է թերթիկները և ցուցադրական խառնում՝ ցույց տալով, որ կարևոր չէ, թե ով է պատկերված նկարում:

Այնուհետև մասնակիցներին է բաժանում թերթիկները արդեն պատահական հաջորդականությամբ:

2-րդ փուլ. Դասընթացավարը հրահանգում է. «Ուշադիր նայեք նկարին, փորձեք հասկանալ՝ ինչպիսի մարդ է պատկերված, ինչի է նա ունակ, միաժամանակ փորձելով գուշակել, թե ով է պատկերված: Թղթի հակառակ կողմում գրեք մասնագիտություն, որն ըստ ձեզ առավել համապատասխան է պատկերված անձնավորությանը: Այնուհետև թերթիկը փոխանցեք աջ կողմում նստած մասնակցին, իսկ ձախ կողմում նստած մասնակցից վերցրեք նոր թերթիկ ու կատարեք նույն գործողությունը: Եթե ստանաք սեփական ինքնանկարով թերթիկը, փորձեք նրան ևս ընտրել մասնագիտություն: Այս

կերպ բոլոր թերթիկները պետք է հայտնվեն բոլորի մոտ: Թերթիկի վրա գրված մասնագիտությունները կարող են կրկնվել»:

3-րդ փուլ. Երբ բոլոր մասնակիցները իրենց գրառումներն են ունեցել նկարների վրա, դասընթացավարը հավաքում է բոլոր թերթիկները, խառնում դրանք և սկսում արդյունքների ամփոփումը: Ցույց է տալիս նկարը, հարցնում, թե ով է պատկերված, ապա կարդում նշված մասնագիտությունները և այդպես մասնակիցների հետ միասին քննարկում են յուրաքանչյուր նկար:

Դասընթացավարը նույնպես կարող է մասնակցել խաղին, դա նրան հնարավորություն կտա քննարկումը սկսել սեփական ինքնանկարից:

Վարժություն. «Այլմոլորակային»

Նպատակը. Դեռահասներին հասարակական աշխատանքի արժեքները գիտակցելու հարցում աջակցությունն է:

Տարիքային խումբ. 14 և բարձր

Տևողությունը. 45 րոպե

Ընթացքը. Կամավորության սկզբունքով դասարանից ընտրվում է 2-3 աշակերտ, ովքեր լինելու են հյուրեր հեռավոր մոլորակից, որոնք անսպասելիորեն այդ քաղաքում և այդ դպրոցում են հայտնվել: Ենթադրվում է, որ տեխնիկական բարդությունների պատճառով Երկրի վրա նրանց գտնվելու ժամանակն ընդամենը 15 րոպե է: Շտապ գումարված մամլո ասուլիսի ընթացքում անհրաժեշտ է այդ կարճ ժամանակահատվածում որքան հնարավոր է լավ ծանոթանալ անհայտ քաղաքակրթության հետ, կենդանի շփման միջոցով փորձել հասկանալ միմյանց:

Հյուրերին կտրամադրվի խոսելու հնարավորություն, որի միջոցով նրանք կհաղորդեն կարևոր տեղեկություններ իրենց մոլորակի, մշակույթի և արդյունաբերության զարգացման մակարդակի, ինչպես նաև իրենց բնակիչների հիմնական զբաղմունքների մասին: Այնուհետև լրագրողները (մնացած աշակերտները) կփորձեն առավել կարևոր հարցեր տալ:

«Այլմոլորակայինները» միջանցքում 3-4 րոպե պատրաստվում են (մտածում, թե ինչ պատմեն իրենց քաղաքակրթության մասին, ինչպես նաև իրենց արտաքին տեսքի մասին, որը կարելի է պատկերել գրատախտակին): Խմբավարը մնացած մասնակիցներին բացատրում է՝ ինչպես իրենց դրսևորել ասուլիսի ընթացքում: Մասնավորապես, յուրաքանչյուր լրագրող պետք է մտածի, թե որ լրատվամիջոցն է նա ներկայացնում, և նախքան հարց տալը անպայման հայտնել այդ մասին (այս պայմանը մեծացնում է մասնակիցների կարգապահությունը և խաղն ավելի ծանրակշիռ դարձնում, այսինքն՝ ավելի է նմանվում իրական մամլո ասուլիսի): Բնականաբար հարցերը պետք է լինեն հակիրճ և հասկանալի: Դրանք կարող են վերաբերել կյանքի ցանկացած բնագավառի, բայց պետք է հնչեն նրբանկատ և քաղաքակիրթ:

Այնուհետև դասարան են հրավիրվում «այլմոլորակայինները», և անմիջապես սկսվում է խաղը. նախ հյուրերը կարճ (3-5 րոպե) տալիս են իրենց հաղորդագրությունը, որից հետո պատասխանում լրագրողների հարցերին:

Խաղի ընթացքում կարող է խաղային կոնֆլիկտը միջանձնայինի վերածվելու խնդիր առաջանալ: Օրինակ, եթե լրագրողներին դուր չգա օտար քաղաքակրթության կենսակերպը, նրանք կարող են խայթող արտահայտություններ անել: Խաղի նման զարգացման դեպքում դասընթացավարը կարող է ներողություն խնդրել «այլմոլորակայիններից» լրատվամիջոցների առանձին ներկայացուցիչների ոչ բավարար դիվանագիտության համար և մասնակիցներին հորդորել լինել ավելի քաղաքակիրթ:

Համաձայն խաղի պայմանի՝ 15 րոպե անց հյուրերը պարզապես անհետանում են, այսինքն՝ նստում են իրենց տեղերում:

Դասընթացավարը բոլորին առաջարկում է շտապ հաղորդագրություններ գրել իրենց գործակալություններին և կիսվել հանդիպումից իրենց տպավորություններով:

5-7 րոպեների ընթացքում յուրաքանչյուր լրագրող և այլմոլորակային առանջին թղթերի վրա պետք է հակիրճ գրեն՝

1. իրենց կարծիքով ինչպիսի՞նն էր զարգացման մակարդակը նոր քաղաքակրթությունում (այլմոլորակայինները գրում են իրենց տպավորությունները Երկրի մասին)
2. արժե՞ արդյոք նոր քաղաքակրթության հետ համագործակցությունը զարգացնել (եթե այո, ապա ո՞ր ուղղությամբ)

Անհրաժեշտ է տեղեկացնել մասնակիցներին, որ հաղորդագրությունները պետք է լինեն հակիրճ՝ էջի 1/3-ից ոչ ավելի: Ոգեշնչված աշակերտները կարող են կարճ ժամանակի ընթացքում շարադրել նույնիսկ մինչև 2 էջ, որը հետագայում կարող է բացասաբար ազդել խաղի ընդհանուր ընթացքի վրա՝ արդյունքների ամփոփման ժամանակ: Թերթիկները վերջում կարող են ստորագրվել՝ նշելով գործակալության անվանումը (այլմոլորակայինները կարող են նշել իրենց մոլորակի անունը):

Թերթիկներն արագ հավաքվում են և կարդացվում մասնակիցների մոտ: (Մեծ լսարանի հետ խաղի անցկացման դեպքում կարդացվում են կամ պատահական ընտրված մի քանի կարծիքներ, կամ առավել կարևորները՝ արագ ընտրված դասընթացավարի կողմից):

Մասնակիցների տարբեր կարծիքներին նման ծանոթությունը խաղի հիմնական քննարկման նախապատրաստումն է:

Քննարկում

Քննարկման ընթացքում պետք է որոշել, թե հասարակության զարգացման որ չափանիշն է ամենակարևորը: Դասընթացավարը գրատախտակին գրում է բոլոր մասնակիցների առաջարկները, որից հետո դրանք հերթով քննարկվում են: Ընդհանրացման սկզբունքով հնարավոր է ստանալ 2-3 առավել կարևոր չափանիշներ, սակայն նման բարդ հարցի քննարկման դեպքում ոչ միշտ է դա հաջողվում:

Եզրակացության մեջ դասընթացավարը կարող է թվարկված չափանիշներին զուգահեռ առաջարկել նաև իր չափանիշները: Օրինակ, դա կարող է լինել ինքնիրացման հնարավորությունը, որն ընձեռվում է հասարակության յուրաքանչյուր անդամի, այլ ոչ միայն դրա լավագույն մասին՝ վերնախավին: Այդուհանդերձ, ինքնիրացման միջոցը, եղանակը յուրաքանչյուր անհատի մոտ յուրօրինակ է,

այդ իսկ պատճառով էլ անգին է, եթե իհարկե դա չի կատարվում ուրիշների ինքնիրացմանը խոչընդոտելով: Այդպիսի ինքնիրացման կատարյալ տարբերակ է ազատ, ստեղծագործ, հասարակության համար օգտակար աշխատանքը, որը կարող է և չտեղավորվել գոյություն ունեցող մասնագիտությունների շրջանակներում:

Եթե հասարակությունը սահմանափակում է իր որոշակի հատվածի անդամների ինքնիրացման հնարավորությունները, ապա այդ կերպ այն սահմանափակում է սեփական զարգացման հեռանկարները: Բայց, քանի որ հասարակությունը բաղկացած է որոշակի մարդկանցից, ապա այդ մարդիկ չպետք է արդարացնեն իրենց պասիվությունը վատ պայմաններով, վատ կառավարությամբ, աշխատակիցների և հարազատների կողմից չհասկացվածությամբ և այլն, այլ պետք է գործեն՝ ձգտելով ինքնաարտահայտման, միաժամանակ բարելավելով ինքնին հասարակությունը, որի մասը իրենք կազմում են:

Վարժություն «Կյանքի ուղին՝ ճամփորդություն»

Նպատակը. Օգնել մասնակիցներին խորհել իրենց կյանքի շուրջ, բացահայտել հիմնական փորձառությունները և կայացրած որոշումները և մտածել իրենց ապագայի մասին

Տարիքային խումբ. 14 և բարձր

Տևողությունը. 30 րոպե

Ընացքը. Դասընթացավարը հետևում է ստորևէ նշված հրահանգներին.

- Այս գործողության կատարման բազմաթիվ եղանակներ կան: Մասնակիցներին տվեք թուղթ և խնդրեք նրանց նկարել իրենց «կյանքը»:
- Բացատրեք, որ մասնակիցները պետք է ցուցադրեն իրենց կյանքն ամբողջությամբ. այն մասը, որն արդեն ապրել են, և այն մասը, որը դեռևս առջևում է:
- Խնդրեք նրանց ներկայացնելու իրենց կենսագործունեության փորձերը, վայրերը և մարդկանց՝ այն ամենը, ինչ կարևոր է եղել կամ որևէ կերպ ազդել է իրենց որոշումների կայացմանը

և լինել հնարավորինս անկեղծ:

- Երբ խմբի բոլոր անդամների կյանքի ուղիները պատրաստ լինեն, խնդրեք յուրաքանչյուր մասնակցի նկարագրել իր կյանքը՝ ներկան և ապագան:

Պարզաբանում

- Ամեն ճամփորդություն ունի իր փակուղիները, սխալ շրջադարձերն ու շեղումները, այնպես որ ամեն ինչ չէ, որ կգնա պլանավորածի համաձայն:
- Որոշարկեք արդյունավետ պլանավորելու և պահանջվող տեղեկատվություն ձեռքբերելու անհրաժեշտությունը. «ճամփորդության» փոխաբերությունն օգտագործելը կարող է օգտակար լինել:
- Խնդրեք մասնակիցներին որոշարկել, թե ով կարող է օգնել իրենց՝ կյանքի ուղին իրականություն դարձնելու գործում:

Վարժություն «Աշխատանքի աճուրդ»

Նպատակը. Զարգացնել խմբային որոշումներ կայացնելու հմտությունները:

Տարիքային խումբ. 14 և բարձր

Տևողությունը. 30 րոպե

Ընթացքը. Դասընթացավարը հետևում է ստորև նշված հրահանգներին.

- Բաժանեք խումբը 4 կամ 5 հոգանոց ենթախմբերի:
- Յուրաքանչյուր ենթախմբի տվեք Աշխատանքի աճուրդի փաթեթ
- Բացատրեք, որ յուրաքանչյուր առարկա վաճառվում է: Ենթախումբն ունի 1000 դոլար ծախսելու համար: Ենթախումբը կարող է հայտ ներկայացնել գնելու 1 առարկա, բազում առարկաներ կամ բոլոր առարկաները: Առարկաները կվաճառվեն ամենաբարձր գին առաջարկած խմբին:
- Թույլատրեք խմբերին 20 րոպեի ընթացքում որոշել իրենց գնառաջարկը:

- Խնդրեք խմբերին որոշարկել լրացուցիչ գործոններ, որոնք կարևոր են նրանց համար, և այդ գործոններն ավելացնել վաճառքի ցանկի մեջ:
- Բացատրեք, որ յուրաքանչյուր մասնակից պետք է ներկայացնի ամբողջ խմբին, թե ինչպես են կայացվել գնառաջարկի մասին որոշումները (ենթախմբերի բոլոր անդամների մասնակցություն /արդարություն/հավասարություն/փոխզիջում և այլն):
- Սկսեք աճուրդը: Խնդրեք հերթով գնառաջարկներ ներկայացնել յուրաքանչյուր առարկայի համար: Խումբը կարող է գնումներ կատարել միայն իրենց պայմանավորված գումարի սահմաններում (նրանք սկզբից կարող են առաջարկել ցածր գին հետագայում տնտեսված գումարով այլ առարկաներ գնելու նպատակով):

Պարզաբանում

- Ի՞նչպես էին կայացվում որոշումները. արդյո՞ք խմբի յուրաքանչյուր անդամ հնարավորություն ունեցավ իր տեսանկյունն արտահայտել:
- Արդյո՞ք այն խումբը, որը միասին ամենալավն աշխատեց, հասավ հաջողության:
- Ո՞ր արժեքներն էին ամենակարևոր որոշումներ կայացնելիս:
- Արդյո՞ք որևէ խումբ իր գումարը խելամիտ կերպով է բաշխել բոլոր անդամների գերակայությունները հաշվի առնելու համար:
- Արդյո՞ք իրական կյանքում պետք է փոխզիջման գալ արժեքների վերաբերյալ (օրինակ՝ բարձր աշխատավարձը միշտ չէ, որ անվտանգություն է ապահովում):

Աշխատանքի աճուրդ՝ քարտեր

Ավտոմեքենա	**Լավ աշխատավարձ**
Բնակարան	**Համազգեստ**
Լավ գործընկերներ	**Մոտ աշխատավայր**
Բարյացակամ մթնոլորտ	**Մաքուր և ապահով աշխատա-վայր**
Առաջընթացի լավ հեռանա-կարներ	**Շատ ճամփորդություններ**
Ուսուցում	**Անվտանգ աշխատանք**
Բացօթյա աշխատանք	**Արդար գործատու**
Այլ _____	**Այլ** _____
Այլ _____	**Այլ** _____

Վարժություն «Ամենա-ամենան»

Նպատակը. Հստակեցնել և ընդլայնել աշակերտների պատկերացումները մասնագիտությունների բազմազանության մասին:

Տարիքային խումբ. 12 և բարձր

Տևողությունը. 15-30 րոպե

Ընթացքը. Աշակերտները նստում են շրջանով: Խմբավարը բացատրում է, որ առաջարկելու է մի փոքր արտասովոր առանձնահատկություններ: Իրենք պետք է հերթով փորձեն կռահել, թե դրանք որ մասնագիտությունների համար կարող են առավել բնորոշ լինել: Եթե աշակերտներից մեկը որևէ մասնագիտություն անվանի, որին մեծամասնության կարծիքով տվյալ առանձնահատկությունն «ամենա-ամենաբնորոշն է», թվարկումը կդադարեցնեն և կփորձեն հիմնավորել իրենց կարծիքը: Վարժությունը կամփոփվի դասարանական քննարկմամբ: Բնական է, որ մասնագիտություններին բնորոշ «ամենա-ամենա» հատկանիշների վերաբերյալ կարծիքները սուբյեկտիվ կլինեն: Սակայն դրանց հիմնավորումները պետք է հիմնվեն օբյեկտիվ գիտելիքների և փաստերի վրա: Օրինակ՝ եթե աշակերտի կարծիքով ամենա–ամենափողաբեր գործը պատգամավոր լինելն է, ապա նրան պետք է հարցնել, թե ինչ գիտի պատգամավորի աշխատավարձի չափի մասին, ինչ այլ բարձր վարձատրվող մասնագիտություններ գիտի, և ինչպես են համեմատվում այդ աշխատավարձերը:

Ցուցումներ խմբավարին. Ընդհանուր առմամբ՝ նպատակահարմար է սահմանափակվել 5-7 առանձնահատկության քննարկումով, որպեսզի խաղը չերկարի և հետաքրքրությունը չկորցնի: Վարժությունն առավել հետաքրքիր դարձնելու նպատակով առաջարկում ենք, որ խմբավարը նախօրոք մտածի այնպիսի արտասովոր բնութագրիչներ, որոնք կխթանեն աշակերտների երևակայությունը: Օրինակ՝ ամենականաչ, ամենաքաղցր, ամենաբրդոտ, ամենամանկական, ամենազվարճալի, ամենաեթերային, ամենագեր մասնագիտությունը և այլն:

Վարժություն «Ով ով է»

Նպատակը. Աշակերտների մեջ խթանել իրենց կերպարը տարբեր մասնագիտությունների հետ զուգորդելու կարողությունը:

Տարիքային խումբը. 12 և բարձր

Տևողությունը. 10 րոպե

Ընթացքը. Աշակերտները նստում են շրջանով: Խմբավարն առա-

ջարկում է թվարկել իրենց հետաքրքրող մասնագիտությունները և թվարկածները գրանցում է գրատախտակին (մինչև 10-15 մասնագիտություն): Խմբավարը բացատրում է, որ այդ ցանկից պատահական հաջորդականությամբ մասնագիտություններ է կարդալու, իսկ իրենք պետք է մի քանի վայրկյանի ընթացքում որոշեն, թե իրենց կարծիքով, տվյալ մասնագիտությունը շրջանով նստած դասընկերներից ում է առավել համապատասխանում: Հենց որ ծափ զարկի, բոլորը միաժամանակ պետք է մատնացույց անեն իրենց ընտրած աշակերտին և մի պահ քարանան, մինչև խմբավարը հաշվի, թե ում քանի հոգի է մատնանշել: Այս կերպ ընդհանրացնում են, թե մասնագիտություններից յուրաքանչյուրը դասընկերների կարծիքով, որ դասընկերոջն է առավել համապատասխանում:

Վարժություն «Որոշում կայացնելը»

Նպատակը. Վերլուծելու, կողմնորոշվելու, հաշվարկելու միջոցով ձևավորել որոշումներ կայացնելու հմտություն: Խթանել մրցակցությունը:

Տարիքային խումբը. 14 և բարձր

Տևողությունը. 45 րոպե

Անհրաժեշտ նյութեր. ափսե, 14 գնդիկ կամ մետաղադրամ:

Ընթացքը: Աշակերտներին բաժանել երկու խմբի: Ամեն խմբից մեկական անդամ պետք է մոտենա սեղանին և ափսեից հերթով գնդիկներ վերցնի: Ամեն անգամ թույլատրվում է վերցնել 1-3 գնդիկ: Հաղթող է համարվում ափսեից վերջին գնդիկը վերցնող անդամի խումբը: Խմբերին 5 րոպե ժամանակ է տրվում, որպեսզի հաղթանակին տանող ռազմավարություն մշակեն: Ապա սկսվում է մրցույթը: Խաղն առաջինն սկսելու իրավունքը խմբերին հերթով է տրվում: Հաղթող է համարվում այն խումբը, որի հաղթանակների թիվը մեծ է:

Քննարկման հարցեր

- Ինչպե՞ս հասաք հաղթանակի: Նկարագրե՛ք:
- Ի՞նչ հմտություններ ձեռք բերեցիք այս խաղի ընթացքում:

Վարժություն «Աճուրդ»

Տարիքային խումբը. 13 և բարձր

Տևողությունը. 10-15 րոպե

Ընթացքը. Խմբավարն անվանում է աշխատանքային ոլորտը, իսկ աշակերտները հերթով անվանում են մասնագիտությունը, որը պատկանում է տվյալ ոլորտին: Մասնագիտությունները կարելի է գրել գրատախտակին: Թվարկված յուրաքանչյուր մասնագիտությունից հետո ուսուցիչը հաշվում է մինչև երեքը կամ ծափ է տալիս՝ սպասելով հաջորդ մասնագիտության անվանմանը: Մասնագիտությունը պետք է ասել մինչև երրորդ ծափը: Նա, ով ասում է վերջին բառը, համարվում է հաղթող: Խաղի ժամանակ երեխաները հասկանում են, թե որքան քիչ բան գիտեն մասնագիտությունների աշխարհի մասին:

Ցուցումներ խմբավարին. Այս վարժությունը հնարավորություն է տալիս աշակերտներին «տեղեկատվական քաղց» զգալ: Երկարացված ընդմիջումները ծափերի միջև, խմբավարի սրամիտ արձագանքները, այնպիսի պարագաները, ինչպիսիք են՝ կոչնազանգը, սիմվոլիկ մրցանակները, խաղը կարող են ավելի գրավիչ դարձնել:

Վարժություն «Աշտարակաշինություն»

Նպատակը. Օգնել գնահատել սեփական նախաձեռնողական ունակությունները և հստակեցնել հաջողության տանող գործոնները:

Տևողությունը. 45 րոպե

Անհրաժեշտ նյութեր. Ա1 չափսի թուղթ, կպչուն ժապավեն, մկրատ

Ընթացքը. Դասարանը բաժանել 5 խմբի: Յուրաքանչյուր խմբին տալ մեկ կպչուն ժապավեն, երկու Ա1 չափսի թուղթ և մեկ մկրատ: Ներկայացնել խնդիրը: Խմբերում պետք է քննարկեն և տրված պարագաներով աշտարակ կառուցելու նախագիծ մշակեն: Աշտարակը պետք է շարժական լինի, այսինքն՝ որևէ առարկայի ամրացած չլինի, և հնարավոր լինի այն կանգնեցնել: Հաղթող կճանաչվի ամենաբարձր աշտարակ կառուցած խումբը:

Վարժությունը կատարվում է երկու փուլով: Առաջին փուլում խմբերը նախագիծ են մշակում: Այս աշխատանքի ընթացքում խմբավարն ուշադրությամբ հետևում է խմբերում ընթացող քննարկումներին, իր համար առանձնացնում լիդերներին (որոնց հիմնականում պատկանում է մտահղացումը) և երկրորդ փուլի համար նրանց առանձնացնում խմբերից՝ այլ հանձնարարություն տալու պատրվակով: Երկրորդ փուլում խմբերը, որոնք արդեն զրկվել են իրենց լիդերներից, պետք է փորձեն իրականացնել նախագիծը: Խմբերից առանձնացված լիդերները պետք է դիտորդների դեր կատարեն՝ դիտարկելով որևէ այլ խմբի: Նրանց տրվում են դիտարկումների թերթիկներ, որոնք պետք է լրացվեն: Աշխատանքներն ավարտելուց հետո խմբերը պետք է իրենց կառուցած աշտարակները դնեն գետնին՝ իրար կողքի: Որոշվում է հաղթող խումբը: Վերջում դիտորդները ներկայացնում են իրենց դիտարկումները խմբերի աշխատանքների մասին:

Քննարկման հարցեր՝

- Որքանո՞վ են համապատասխանում կառուցված աշտարակները ներկայացված նախագծին:
- Արդյոք խնդիրները կապվա՞ծ էին լիդերի բացակայության հետ:
- Ինչպե՞ս հաղթահարվեցին դրանք: Նոր լիդերներ ի հայտ եկա՞ն, թե՞ ոչ:

Տարբերակ. Աշտարակաշինության համար կարելի է նաև թղթի փոխարեն կոկտեյլի ձողիկներ տալ:

Դիտորդի թերթիկ

Դիտորդը չպետք է տվյալ խմբի անդամ լինի: Նա չպետք է խառնվի գործընթացին: Նա պետք է աշխատանքային գործընթացի դիտարկում կատարի հետևյալ հարցերի շուրջ.

- Ինչպե՞ս աշխատեց խումբը:
- Ի՞նչ ռազմավարություններ ծնվեցին խմբում:
- Դերերի բաշխում եղա՞վ, թե՞ ոչ:
- Ո՞վ էր լիդերը:
- Ո՞վ էր վարում բանակցությունները:

- Հաջողվեց իրականացնել նախագիծը:
- Ընթացքում փոփոխվեց նախագիծը:
- Ինչ հաջողություններ բերեց:
- Ինչն էր անհաջողության պատճառը:

Վարժություն «Հաջողակ մարդու որակները»

Նպատակը. Պարզել կյանքում հաջողությունների հասնելու համար մարդուն անհրաժեշտ անձնային որակները և հմտությունները:

Տարիքային խումբը. 14 և բարձր

Տևողությունը. 40 րոպե

Անհրաժեշտ նյութեր. խմբերի թվով քարտեր, որոնցում նշված են տարբեր անձնային որակներ

Ընթացքը.

1-ին փուլ. Խմբավարն առաջարկում է աշակերտներին թվարկել բոլոր այն բառերը, որոնք զուգորդվում են «հաջողություն» բառի հետ: Այնուհետև կազմակերպում է քննարկում՝ «Ինչ է նշանակում հաջողակ մարդ» թեմայով:

2-րդ փուլ. Քննարկումից հետո աշակերտները բաժանվում են խմբերի: Խմբերի քանակը կախված է աշակերտների թվից: Ցանկալի է, որ յուրաքանչյուր խմբում լինի 4-6 աշակերտ: Խմբերի բաժանելուց հետո, խմբավարն ասում է. «Որպեսզի կարողանանք պատկերացում կազմել, թե ինչ է նշանակում «գործարար մարդ», պետք է սկզբում քննարկենք և ընտրենք 5 ամենակարևոր որակները, որոնք բնութագրում են հաջողակ մարդուն: Ձեզ առաջարկվում են անձնային տարբեր որակներ: Մտածեք ու եթե կարծում եք, որ կան որակներ, որոնք պակասում են կամ նշված չեն ձեզ տրվող քարտում, կարող եք լրացումներ կատարել: Պատկերացրեք ժամանակակից աշխարհի հաջողակ մարդուն և մտածեք այն որակների մասին, որոնք նրան օգնել են բարձունքների հասնելու հարցում: Սկզբում ինքնուրույն մտածեք և ձեր կարծիքը ձևակերպելուց հետո խմբում քննարկեք և հանգեք բոլորի համար ընդունելի որոշման: Այնուհետև առանձնացրեք հինգ առավել նշանակալի որակներ, որո-

նք բնութագրում են կյանքում հաջողակ դարձած մարդուն»: Յուրաքանչյուր խումբ ընտրում է 1 ներկայացուցիչ (ցանկության դեպքում՝ կարելի ընտրել 1-ից ավելի ներկայացուցիչ), որը կներկայացնի ընտրված որակները և կբացատրի, թե ինչու է խումբն ընտրել հենց այդ որակները:

Քարտի օրինակ

- մրցակցության ոգի,
- ընկերակցության, համագործակցության կարողություն,
- ստեղծագործելու ունակություն, ստեղծարարություն,
- հետաքրքրասիրություն,
- նյութական հաջողություն ունենալու մտահոգություն,
- պարկեշտություն,
- բարություն,
- ազնվություն,
- անկախություն,
- մտավոր զարգացածություն,
- հնազանդություն,
- նախաձեռնողականություն,
- բաց լինել, շիտակություն,
- սեփական համոզմունքների առկայություն,
- կազմակերպվածություն,
- հումորի զգացում,
- հուզականություն,
- անկեղծություն,
- հարմարվելու ունակություն,
- դաստիարակվածություն,
- համառություն, հաստատակամություն,
- հավասարակշռվածություն:

Վերջում խմբավարն ամփոփում է քննարկումը՝ համեմատելով և ընդհանրացնելով խմբերի կարծիքները և ներկայացնում է հոգեբանների կարծիքը հաջողակ մարդկանց մասին: Հոգեբանները հաստատում են, որ հաջողակ մարդիկ հաջողակ են ցանկացած գործում:

Ինչն է միավորում հաջողակ մարդկանց: Որպես կանոն դա միայն տաղանդը չէ, ոչ էլ բնածին ընդունակությունները: Կան բազմաթիվ այլ որակներ:

Նրանք առանձնանում են հետևյալ որակներով.

- ակտիվություն,
- ստեղծագործականություն,
- ինքնավստահություն,
- շփվողականություն,
- մարդասիրություն:

Նրանց մեծամասնությունը նաև՝

- փառասեր է, հավակնոտ,
- համարձակ է, խիզախ,
- հավատում է իրեն և իր գործին,
- պրոֆեսիոնալ է,
- ունի պատասխանատվության զգացում:

Վարժություն «Բացասական– դրական»

Նպատակը. Օգնել ավելի խորը հասկանալ մասնագիտական գործունեության էությունը:

Տարիքային խումբը. 12 և բարձր

Տևողությունը. 40 րոպե

Անհրաժեշտ նյութեր. վատման թուղթ, տարբեր գույնի նշագրիչներ, կոճգամներ

Ընթացքը. Աշակերտները նշված բայերին համապատասխան ներկայացնում են մասնագիտություններ: Աշակերտներին առաջարկվում է հիշել 10-20 հականիշ բառեր: Դրանք պետք է լինեն բայեր և կապված լինեն միմյանց վրա փոխազդելու հետ: Օրինակ՝

լռել-խոսել,

վշտացնել-ուրախացնել,

մնասել-բուժել և այլն:

Խմբավարը նախօրոք պատրաստում է մեծ թուղթ, որը բաժանված է 4 սյունակների: Աշակերտները ներկայացնում են հականիշ

զույգեր: Խմբավարը դրանք գրանցում է սյունակներում: Առաջին հականիշը՝ առաջին սյունակում, երկրորդը՝ եկրորդում: Եթե բայը բացասական երանգ (նշանակություն) ունի, օրինակ՝ վնասել, ապա ավելի լավ է այն գրել առաջին սյունակում: Երբ աշակերտներն այլևս ոչինչ չեն կարողանում նշել, խմբավարն առաջարկում է նշված յուրաքանչյուր բային համապատասխան հիշել որևէ մասնագիտություն: Օրինակ՝ «լռել» բային կարող է համապատասխանել «գրադարանավարի» մասնագիտությունը, որովհետև գրադարանում ընդունված է պահպանել լռություն, կամ «խոսել» բային համապատասխանում են «ուսուցիչ», «հաղորդավար» մասնագիտությունները: Մասնագիտությունները, որոնք համապատասխանում են առաջին սյունակի բայերին, գրել երրորդ սյունակում, իսկ երկրորդ սյունակի բայերին համապատասխան մասնագիտությունները գրել չորրորդ սյունակում: Ցանկալի է, որ մասնագիտությունները չկրկնվեն: Երբ սյունակները լրացված են, խմբավարը կատարված աշխատանքը վերլուծելու և ամփոփելու համար կազմակերպում է քննարկում:

Քննարկման հարցեր

- Միգուցե որոշ մասնագիտություններ արժե փոխել տեղերով:
- Ո՞ր այլ սյունակում կարող ենք գրել, օրինակ, «ոստիկան» մասնագիտությունը:
- Ինչ ընդհանրություններ կան երրորդ և չորրորդ սյունակների մասնագիտությունների միջև:
- Ներկայացված մասնագիտություններից ո՞րը դուք կընտրեիք: Ինչո՞ւ:
- Ներկայացված մասնագիտություններից ո՞րը հաստատ չէիք ընտրի: Ինչո՞ւ:

Վարժություն «Պահանջներ և հնարավորություններ»

Նպատակը. Համեմատական վերլուծություն անցկացնել մասնագիտության պահանջների և սեփական հնարավորությունների միջև:

Տարիքային խումբ. 14 և բարձր

Տևողությունը. 40 րոպե

Ընթացքը: Աշակերտները մեկական Ա4 չափսի թուղթ են վերցնում, ծալում և բացիկի պես էջակալում: Խմբավարը բացատրում է, որ առաջին էջի վերին մասում պետք է գրեն իրենց նախընտրած մասնագիտությունը, ապա էջն ուղղահայաց երկու մասի բաժանեն, մեկը նշեն «+», մյուսը՝ «-» նշանով:

«+» սյունակում պետք է փորձեն գրել նախընտրած մասնագիտության՝ իրենց կարծիքով առավելությունները՝ դրական կողմերը, իսկ «-» սյունակում՝ բացասականները: 2-րդ էջում պետք է գրեն բնավորության այն հատկանիշները, որակները, որ տվյալ մասնագիտությունը պահանջում է անձից (աշխատելիս օգտվում են 1-ին էջի տվյալներից): Օրինակ՝ երկրաբանի մասնագիտությունը պահանջում է դիմացկունություն, դիտողականություն, կոփվածություն, կամքի ուժ և այլն: 3-րդ էջում աշակերտները, օգտվելով նախորդ էջի տվյալներից, պետք է փորձեն թվարկել այն հմտությունները, կարողությունները, գիտելիքները և անձնային որակները, որոնք դեռ պետք է ձեռք բերեն, ապա դասակարգեն 2 սյունակով: 4-րդ էջում պետք է գրեն, թե տվյալ մասնագիտության համար անհրաժեշտ հատկություններից յուրաքանչյուրն ինչպես և որտեղ է հնարավոր ձեռք բերել և որոնք, իրենց կարծիքով, հնարավոր չէ ձեռք բերել և ինչո՞ւ: Աշխատանքն ավարտելով՝ աշակերտները խմբվում են ըստ մասնագիտական ոլորտների և վերլուծում են իրենց դիտարկումները:

Վարժություն «Ժամանակի մեքենա»

Տարիքային խումբը. 14 և բարձր

Ընթացքը. Խմբավարը տալիս է հետևյալ հրահանգը. «Պատկերացրեք, թե դուք «ժամանակի մեքենայի» օգնությամբ տեղափոխվել եք մի քանի տարի առաջ: Ինչպիսի՞ն եք պատկերացնում ձեր մասնագիտական ապագան: Որտե՞ղ և ի՞նչ եք աշխատում: Նկարագրեք ձեր աշխատանքային օրը: Ինչպիսի՞ փոխհարաբերություններ ունեք ձեր գործընկերների հետ: Արդյոք ձեզ ամեն ինչ դո՞ւր է գալիս: Ի՞նչ խոչընդոտներ եք ստիպված եղել հաղթահարել մասնագիտություն ձեռք բերելիս, աշխատանք փնտրելիս և ինչպե՞ս: Ո՞վ և ինչպե՞ս է ձեզ

օգնել ձեր ծրագրերի իրականացման գործում: Ինչպիսի՞ անձնային որակներ և հմտություններ են ձեզ օգնել: Աշակերտներին ժամանակ է հատկացվում տրված հարցերի պատասխանները գրի առնելու համար, որից հետո խմբավարը կազմակերպում է քննարկում:

Քննարկման հարցեր

1. Իրատեսակա՞ն է արդյոք այդ կերպարն ապագայում:
2. Իմաստ ունի՞ ժամանակ և էներգիա ծախսել այն իրականացնելու համար:
3. Իրականում ուզո՞ւմ ես այն իրականացնել:

Վարժություն «Աշխատանք և ապագա»

Նպատակը. Քաջալերել մտորումներն ապագայի և այն խնդրի շուրջ, թե տեխնոլոգիական առաջընթացն ինչպես է փոխել և ինչպես կշարունակի փոխել մեր կյանքը: Խթանել գնահատելու, վերլուծելու, ապագան արժևորելու կարողությունները:

Տարիքային խումբ. 14 և բարձր

Անհրաժեշտ նյութեր. լրագրերից կտրատած՝ «պահանջվում է» հայտարարությունների օրինակներ

Ընթացքը.

1-ին փուլ. Աշակերտները զույգերով ծանոթանում են «պահանջվում է» հայտարարություններին և օղակի մեջ առնում այն աշխատանքները, որոնք, իրենց կարծիքով, գոյություն չեն ունեցել սրանից 100 տարի առաջ:

2-րդ փուլ. Միասին կազմում են «Աշխատատեղերն այսօր» թերթիկ՝ նշելով իրենց ընդգծած աշխատանքը և հիմնավորելով, թե ինչու այն 100 տարի առաջ չի եղել և ինչու այսօր կա:

3-րդ փուլ. Դասարանը քննարկում է, թե ինչն է պատճառը, որ ժամանակի ընթացքում աշխատատեսակները փոխվել և փոխվում են: Բերված հիմնավորումների մեջ կլինի, իհարկե, տեխնոլոգիական առաջընթացը որպես պատճառ: Աշակերտների ուշադրությունը պետք է հրավիրել նաև տնտեսական և սոցիալական փոփոխությունների վրա:

4-րդ փուլ. Ջույգերը միանալով քառյակներ են կազմում և միասին մշակում «Աշխատատեղերն ապագայում» թերթիկ:

5-րդ փուլ. Այդ ամենին հաջորդում է դասարանական քննարկում:

Քննարկման համար առաջարկվող հարցեր.

- Ձեր կարծիքով՝ ո՞ր մասնագիտություններն ապագայում գոյություն չեն ունենա:
- Ինչպիսի՞ աշխատանքների պահանջարկն ապագայում ևս կլինի:
- Կարո՞ղ եք ասել աշխատանքների օրինակներ, որոնք այսօր գոյություն չունեն, բայց, ամենայն հավանականությամբ, կառաջանան ապագայում:
- Հասարակական կամ տնտեսական ո՞ր փոփոխությունները կարող են նոր տեսակի աշխատանքների կարիք առաջացնել:
- Այս նոր աշխատանքներն ի՞նչ նոր առավելություններ կարող են առաջ բերել:
- Նոր աշխատանքների հետևանքով ի՞նչ նոր խնդիրներ կարող են ծագել:
- Այդ հավանական խնդիրներն ինչպե՞ս կարելի է հաղթահարել:

Տարբերակ

Աշակերտներին առաջարկվում է քննել և հետազոտել այն աշխատանքները, որոնք անցյալում գոյություն են ունեցել, բայց այսօր այլևս չկան:

- Որո՞նք են դրանց ժամանակավրեպ դառնալու պատճառները:

Շարունակությունը

Աշակերտները կարող են դասարանի հետ հանդիպման հրավիրել համայնքում եղած աշխատանքային գործակալությունների կամ ձեռնարկությունների ներկայացուցիչների:

- Նրանց կարծիքով՝ ինչպիսի՞ աշխատատեղերի ավելի մեծ պահանջարկ կլինի ոչ հեռու ապագայում (առաջիկա 10-15 տարիների ընթացքում):

Վարժություն «Ո՞րն է կարևոր»

Նպատակը. Նպաստել տարբեր մասնագիտությունների կարևորության, հասարակության համար դրանց բոլորի անհրաժեշտության գիտակցմանը:

Տարիքային խումբ. 14 և բարձր

Ընթացքը. Դասը սկսվում է հետևյալ հարցերի շուրջ ծավալված դասարանական քննարկումից.

- Ինչ չափանիշներով կառաջնորդվեք մասնագիտություն ընտրելիս:
- Կա՞ն մասնագիտություններ, որոնք երբեմն ոմանց կողմից պակաս կարևոր կամ պակաս պատվաբեր են համարվում:
- Ինչո՞վ է պայմանավորված նման ընկալումը:

Այնուհետև դասարանը բաժանվում է խմբերի: Աշակերտները խմբերով պատրաստում են իրենց ընկալմամբ առավել կարևոր մասնագիտությունների մեկական ցանկ՝ դասակարգելով ըստ կարևորության նվազման, և հիմնավորում են իրենց դասակարգումը:

Դասարանը քննարկում է դրանք՝ ներկայացնելով հիմնավորումներ դասակարգման վերաբերյալ:

Ապա աշակերտները ծանոթանում են ստորև բերված պատմությանը, գրում և ներկայացնում են իրենց եզրակացությունը դրա մասին: Աշակերտները վերադառնում են իրենց խումբ և համատեղ դիտարկում մասնագիտությունների իրենց տված դասակարգումը՝ պատմության ընթերցումից ստացած տպավորությունների լույսի ներքո:

Ամփոփիչ քննարկում.

- Ինչ կպատահեր, եթե որոշ գործերով ոչ ոք չզբաղվեր:
- Կա՞ն մասնագիտություններ, որոնց պահանջարկը ժամանակի ընթացքում նվազում է: Ինչն է դրա պատճառը:

Ճամփորդներ

Մի ատաղձագործ, մի դերձակ և մի հոգևորական ճամփորդելիս հանդիպում են և որոշում ճանապարհը միասին շարունակել: Երեկոյան կողմ հասնում են անտառի բացատի և որոշում կանգ առնել՝ հանգստանալու: Հոգևորականը և դերձակը քնում են, իսկ ատաղ-

ձագործի քունը չի տանում: Մտածում է՝ ինչով զբաղվի, որ ժամանակն արագ անցնի: Նկատում է չորացած հաստաբուն մի ծառ: Սկսում է այս ծառի բունը քանդակել: Աշխատում է, աշխատում ու մի գեղեցիկ աղջկա արձան է կերտում. այնքան գեղեցիկ, այնքան անթերի, կարծես կենդանի մարդ լիներ: Երբ աշխատանքն ավարտում է, ինքն էլ հոգնած պառկում է ու քնում: Գիշերը ցրտում է, սկսում է անձրև մաղել: Այդ միջոցին արթնանում է դերձակը: Տեսնում է փայտյա գեղեցկուհուն ու շատ է հավանում: Չորս կողմն է նայում, լայն տերևներ ու մատղաշ ճյուղեր գտնում ու դրանցով արձանի համար այնպիսի գեղեցիկ հագուստ է կարում, որ կարծես մարդու ձեռք դիպած չլիներ: Հագցնում է, որ անձրևից ու ցրտից պաշտպանի: Գործի արդյունքից գոհ՝ նորից պառկում է քնելու: Հիմա էլ հոգևորականն է արթնանում: Նա որ արձանը տեսնում է, սկզբից կարծում է, թե կենդանի մարդ է: Երբ հասկանում է, որ անշունչ մարդ է, շատ է ափսոսում: Ծնկի է իջնում ու Աստծուն աղոթում, որ նրան շունչ ու հոգի տա՝ կենդանացնի: Աստված լսում է հոգևորականի աղոթքը: Առավոտյան, երբ երեքն էլ արթնանում են ու տեսնում գեղեցկուհուն, սկսում են միմյանց հետ վիճել: Ատաղձագործն ասում է.

- Ես եմ ստեղծել այս գեղեցկուհուն. չէ՞ որ ես եմ նրան քանդակել չոր ծառի բնից:

- Հա՛, բայց որ ես չլինեի, փայտն անձրևից կփչանար, ու ոչ մի արձան էլ չէր լինի,- առարկում է դերձակը:

- Իմ աղոթքները որ չլինեին, այդպես էլ կմնար՝ անշունչ արձան՝ անտառի բացատում կանգնած:

Այսպես երկար են վիճում, թե իրենցից ում գործն է ավելի կարևոր ու չեն կարողանում համաձայնության գալ…

Դուք ի՞նչ կասեք:

Վարժություն «Ինչպե՞ս հասնել նպատակին»

Նպատակը. Ձևավորել նպատակաուղղված հաջորդական քայլեր մշակելու կարողություն: Խթանել վերլուծելու, դասակարգելու, պլանավորելու, կշռադատելու հմտությունները:

Տարիքային խումբ. 14 և բարձր

Տևողությունը. 40 րոպե

Ընթացքը. Դասարանը բաժանվում է 4-5-հոգանոց խմբերի, ցանկալի է՝ ըստ նախասիրությունների: Միասին աշխատելով՝ խմբի անդամները պետք է թղթի վրա նշեն այն քայլերը, որոնք, իրենց կարծիքով, կնպաստեն լավ մասնագետ դառնալուն (աշխատանքը կարող է լինել ընդհանրացված կամ կոնկրետ մասնագիտությունների վերաբերյալ): Յուրաքանչյուր քայլ կարող է հարակից «ենթաքայլեր» ունենալ: Դրանք ևս նշվում են և հիմնական քայլերի հետ սլաքներով ամրացվում: Խմբերը ներկայացնում են աշխատանքները և քննարկում ընկերների հետ: Դասը եզրափակվում է դասարանական քննարկմամբ: Ի մի են բերվում եզրահանգումները:

Վարժություն «Հոռետեսներ և լավատեսներ»

Նպատակը. Վերլուծել տարբեր մասնագիտությունների դրական և բացասական կողմերը:

Տարիքային խումբ. 14 և բարձր

Տևողություն. 40 րոպե

Ընթացքը. Աշակերտները պետք է ներկայացնեն յուրաքանչյուր մասնագիտության դրական և բացասական կողմերը: Քննարկման ժամանակ հաշվի առնել հետևյալ հարցերը. ինչ նշանակություն ունի տվյալ մասնագիտությունը հասարակության համար, ինչպիսի՞ աշխատանք է նրանում օգտագործվում, աշխատանքը բժշկական հակացուցումներ ունի՞, ինչ որակներ պետք է ունենա մասնագետը: Յուրաքանչյուր հիմնավորված պատասխանի համար յուրաքանչյուր թիմ կամ աշակերտ ստանում է մեկ միավոր: Հաղթում է ամենաշատ միավորներ հավաքած թիմը:

Մասնագիտությունները կարելի է բաշխել շարքով, իսկ լավատեսներին և հոռետեսներին՝ ըստ տարբերակների:

Ցուցումներ խմբավարին. Աշակերտները կարող են այս աշխատանքը կատարել և՛ անհատապես, և՛ խմբային:

Վարժություն «Անցյալը, ներկան, ապագան»

Նպատակը. Օգնել գիտակցել մարդու կյանքում անցյալի, ներկայի և ապագայի դերը՝ կարևորելով դրանցից յուրաքանչյուրը: Վերհանել անցյալի փորձի հիման վրա ներկայում ուղղորդված գործելու և ցանկալի ապագա ստեղծելու հնարավորությունները:

Տարիքային խումբ. 12-15 տարեկան

Ընթացքը. Խմբավարը դասարանը բաժանում է 3 խմբի կամ 3-ի բաժանվող թվով խմբերի: Խմբերից մեկին հանձնարարում է հիմնավորել մարդու կյանքում անցյալի կարևորությունը, մյուսին՝ ապագայի կարևորությունը, իսկ երրորդին՝ ներկայի: Խմբերը պետք է փաստարկներ և հիմնավորումներ բերեն իրենց հանձնարարված ժամանակահատվածի օգտին:

Երբ խմբերն ավարտում են աշխատանքը, խմբավարը նոր խմբեր է ստեղծում՝ նախկին խմբերից յուրաքանչյուրից մեկական անդամ ներգրավելով նոր խմբերում: Խմբավարը հանձնարարում է խմբի ներսում դիտարկել բոլոր կարծիքները, լսել բոլոր փաստարկներն ու հիմնավորումները և ընդհանուր եզրահանգման գալ՝ չմերժելով որևէ տեսակետ:

Այնուհետև խմբավարն ընթերցում է «Երեք իմաստունների առակը»: Ապա աշակերտների աշխատանքի արդյունքներից և տեքստից արված հետևությունները ներկայացնում է դասարանին:

Քննարկման հարցեր

- Ի՞նչ նախադրյալներ են դրվում անցյալում, և ինչպե՞ս դրանք կարող են ազդել ապագայի վրա:
- Ինչպե՞ս կարելի է իրականացնել ապագայի ակնկալիքները:
- Ի՞նչ կարելի է անել ներկայում ցանկալի ապագան ապահովելու համար:

Երեք իմաստունների առակը

Երեք իմաստուն վիճում էին այն մասին, թե ինչն է կարևոր մարդու համար՝ նրա անցյա՞լը, ներկա՞ն, թե՞ ապագան: Մեկն ասում է.

- Իմ անցյալն է ինձ դարձրել այնպիսին, ինչպիսին կամ: Ես այսօր կարող եմ անել այն, ինչ սովորել եմ անցյալում: Ես հավատում եմ ինձ,

որովհետև ինձ հաջողվում է անել այն գործերը, որոնց փորձը նախկինում ձեռք եմ բերել: Ինձ դուր են գալիս իմ հին ծանոթները, ընկերները՝ մարդիկ, որոնց հետ նախկինում ես ինձ լավ էի զգում: Ես հիմա նայում եմ ձեզ, տեսնում եմ ձեր ժպիտները և սպասում առարկումների, որովհետև մենք մեկ անգամ չէ, որ վիճում ենք, և ես արդեն գիտեմ, որ դուք սովոր չեք համաձայնել առանց առարկելու:

- Դրա հետ հնարավոր չէ համաձայնել,- ասաց մյուսը,- եթե դու ճիշտ լիներիր, ապա մարդը դատապարտված կլիներ սարդի պես օրեցօր պտտվելու իր սովորությունների սարդոստայնում: Մարդուն կերտում է իր ապագան: Կարևոր չէ՝ ինչ գիտեմ ես հիմա և ինչ եմ կարողանում: Իմ պատկերացումն այն մասին, թե ինչպիսին եմ ցանկանում լինել երկու տարի հետո, ավելի իրական է, քան իմ հիշողություններն այն մասին, թե ինչպիսին եմ եղել երկու տարի առաջ, որովհետև իմ բարեկեցությունն այժմ կախված չէ նրանից, թե ինչպիսին եմ պատրաստվում դառնալ: Ինձ դուր են գալիս նոր տպավորությունները, նոր մարդկանց հետ ծանոթանալը: Իսկ ձեզ հետ զրույցը հետաքրքիր է ոչ այն պատճառով, որ մենք արդեն սովոր ենք վիճել իրար հետ, այլ որովհետև ես կանխազգում եմ հետաքրքիր պայքար և մտքի անկանխատեսելի շրջադարձ:

- Դուք ամբողջովին անտեսում եք այն,- միջամտեց երրորդը,- որ անցյալն ու ապագան գոյություն ունեն մեր մտքերում: Անցյալն արդեն չկա, ապագան դեռ չկա: Անկախ նրանից՝ հիշում եք դուք անցյալը, թե երազում եք ապագայի մասին, դուք գործում եք միայն ներկայում: Կյանքում միայն ներկայում է, որ կարելի է ինչ-որ բան փոխել: Ո՛չ անցյալը, ո՛չ ապագան մեզ ենթակա չեն: Միայն ներկայում կարելի է երջանիկ լինել, անցյալի երջանկության մասին հիշողությունները ցավոտ են, եթե ներկայում այն չկա, իսկ ակնկալիքն ապագայից՝ տագնապալի: Իսկ երբ ես սկսում եմ վիճել, ես պետք է հաշվի առնեմ կամ նկատի ունենամ ուժերի այն հարաբերակցությունը, այն փաստարկները, որոնք բերվում են հիմա՝ ներկայում:

Իմաստունները դեռ երկար վիճեցին՝ հաճույք ստանալով անշտապ զրույցից: Եվ ես չգիտեմ, թե նրանցից ով հաղթեց:

Վարժություն «Նպատակներ և դրանց տանող գործողություններ»

Նպատակը. Օգնել հստակեցնել նպատակներին հասնելու ուղիները:

Տարիքային խումբը. 12 և բարձր

Ընթացքը. Խմբավարն աշակերտներին հանձնարարում է՝ անհատապես աշխատելով գրել մի քանի ցանկություն, որոնք կուզեին, որ մոտ ապագայում կատարվեին: Ապա հանձնարարում է կազմել 4- հոգանոց խմբեր և, միասին քննարկելով՝ առանձնացնել դրանցից մեկը, որը քիչ թե շատ ընդհանուր է բոլորի համար և առավել իրատեսական:

Այնուհետև խմբերում միասին աշխատելով՝ փորձում են մշակել հաջորդական քայլեր, որոնք կարող են տանել այդ ցանկության իրականացմանը: Քննարկում են, թե ինչը կարող է օգնել, ինչը խանգարել դրան: Քննարկումն ավարտելուց հետո խմբերը ներկայացնում են աշխատանքները:

Քննարկման հարցեր

- Ցանկությունները ճրբ էին ավելի իրատեսական թվում՝ մինչև քայլերի մշակումը, թե դրանից հետո: Ինչու:
- Կա՞ն անձնային որակներ, որոնք կարող են նպաստել ցանկությունների իրականացմանը: Ըստ ձեզ՝ որո՞նք են:
- Որքանով են մեր ցանկությունները կախված ուրիշներից: Ովքե՞ր կարող են մեզ օգնել այդ ճանապարհին:

Վարժություն «Իմ կապիտալները»

Նպատակը. Աշակերտները յուրացնում են «կապիտալ» հասկացությունը:

Տարիքային խումբը. 14 և բարձր

Տևողությունը. 45 րոպե

Ընթացքը. Խմբավարը կազմակերպում է քննարկում «Որտեղի՞ց կարող է իմ գրպանում փող հայտնվել» թեմայով: Քննարկումն իրականացնել մտագրոհի միջոցով: Աշակերտները նշում են գումարի

հայտնվելու բոլոր հնարավոր պատճառները: Խմբավարը գրի է առնում դրանք գրատախտակին՝ խուսափելով կրկնություններից:

Աշակերտները կարող են շատ պատճառներ թվարկել (10, 20 և ավելի).

- փողոցում եմ գտել,
- աշխատել եմ,
- գողացել եմ,
- ինչ-որ մեկից եմ խնդրել,
- ծնողներս են տվել,
- ինչ-որ բան եմ վաճառել,
- վարկ եմ վերցրել,
- թոշակ եմ ստացել…և այլն:

Խմբավարը վերլուծում է պատճառները. «Եթե գումար ես գտել փողոցից, դա միանշանակ պատահականություն է: Իհարկե, այստեղ որոշ դեր ունի նաև դիտողականությունը: Գումար ես աշխատել. հիմնականում դեր են խաղում քո անձնային որակները: Չնայած որ սոցիալական կապիտալն այս գործում ևս կարևոր նշանակություն ունի: Գողացել ես. անձնային որակներ, որոշ նշանակություն ունի սոցիալական կապիտալը: Այնուհետև խմբավարը եկամուտ ստանալու բոլոր հնարավոր աղբյուրները խմբավորում է ըստ 4 հիմնական խմբերի.

1. դիպված, պատահականություն,
2. անձնային որակներ՝ ընդունակություններ, գիտելիքներ, կրթություն, փորձ, բնավորություն, կամք, նպատակասլացություն, գեղեցկություն, հմայք և այլն,
3. սոցիալական կապիտալ՝ երկարատև հարաբերություններ մարդկանց հետ, կապեր,
4. նյութական կապիտալ՝ ամեն ինչ՝ արդեն ունեցած փողեր, շարժական և անշարժ գույք, բաժնետոմսեր, սարքավորումներ և այլն:

Այնուհետև աշակերտներից ընտրվում է կամավոր: Մնացած աշակերտները բաժանվում են երկու խմբի՝ «հրեշտակներ» և «սատանաներ»: Խմբերը տեղավորվում են սենյակի երկու տարբեր

անկյուններում, իսկ կամավորը մնում է կենտրոնում:

Խմբավարն աշակերտներին առաջարկում է պատկերացնել, որ անցել է ևս հինգ տարի: Ինչպե՞ս կարող են ավելանալ ձեր ընկերոջ կապիտալները: Ինչպե՞ս և ինչո՞ւ: Քննարկմանը հատկացվում է երեք րոպե: Երբ «հրեշտակները» հրապարակում են իրենց որոշումը, համանման հրահանգ տրվում է նաև «սատանաներին». «Այժմ պատկերացրեք, որ անցել է ևս հինգ տարի, ինչպե՞ս կարող են պակասել ձեր ընկերոջ կապիտալները»: Քննարկմանը հատկացվում է երեք րոպե: Վերջում խմբավարը կազմակերպում է ամփոփիչ քննարկում:

Քննարկման հարցեր

- Ի՞նչ հետևություններ արեցիք այս խաղից: Ինչո՞ւ:
- Որքանո՞վ կյանքում կարելի է առաջնորդվել ինտուիցիայով, բանականությամբ:

Ցուցումներ խմբավարին. Պատմության զարգացումը մի քանի փուլ է անցնում: Վերջին խոսքը «հրեշտակներինն» է, որպեսզի խաղն ավարտեք դրական տրամադրվածությամբ: Խաղը կարելի է կրկնել մի քանի անգամ՝ տարբեր կամավորների հետ:

Վարժություն «Կյանքի մեկ օրը»

Նպատակը. Նպաստել աշակերտների կողմից մասնագիտությունների առանձնահատկությունների ավելի մանրամասն և բազմակողմանի գիտակցմանը:

Տարիքային խումբ. 13 և բարձր

Տևողությունը. 15-25 րոպե

Ընթացքը. Խմբավարն աշակերտների հետ միասին որոշում է, թե որ մասնագիտությունն է ավելի հետաքրքիր քննարկել: Օրինակ՝ խումբը որոշում է ընտրել «ֆոտոմոդելի» մասնագիտությունը: Աշակերտներին տրվում է հետևյալ հրահանգը. «Այժմ մենք համատեղ ջանքերով կաշխատենք կազմել պատմություն, որտեղ կներկայացնենք մեր ընտրած մասնագիտության տեր մարդու մեկ աշխատանքային օրը: Օրինակ՝ մեզ շատ ծանոթ «ուսուցիչ» մասնագիտության տեր մարդու աշխատանքային օրվա մասին կարող ենք ասել՝ *զանգ*

– նախաճաշ - զանգ- դաս – ծույլիկներ – հարց – պատասխան – երեք – ուսուցչանոց – տնօրեն – կոնֆլիկտ – դաս – գերազանցիկներ - բանավոր առաջադրանք – հինգ – զանգ – տուն – ճաշ -անկողին: Այս խաղում մենք կփորձենք հասկանալ, թե որքանով ենք լավ պատկերացնում այս կամ այն աշխատանքի բովանդակությունը, հիմնական գործառույթները:

Խաղի կարևոր պայման է, որ յուրաքանչյուր մասնակից, մինչև նոր գոյական անվանելը, պարտադիր կրկնի այն ամենը, ինչ ասվել է մինչ իրեն: Միայն այդ դեպքում պատմվածքը կընկալվի ամբողջական: Որպեսզի դա ձեզ հաջողվի, պետք է ուշադիր լսեք բոլոր արտահայտվողներին»:

Խմբավարը կարող է ասել առաջին բառը, իսկ մյուս խաղացողները հերթականությամբ ասում են իրենց գոյականները՝ անպայման կրկնելով այն, ինչ մինչ այդ ասվել է: Եթե խաղացողների թիվը փոքր է (6-8 մարդ), կարելի է շրջանով երկու անգամ անցնել. այդ դեպքում յուրաքանչյուրը պետք է 2 գոյական ասի:

Ցուցումներ խմբավարին. Եթե պատմվածքը շատ խճճված է ստացվում, կարող եք խնդրել աշակերտներից մեկին իր խոսքերով վերապատմել պատմածը: Վերջում կարելի է քննարկել, թե որքանով ճիշտ և բնորոշ էին նկարագրել աշխատանքային օրը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գևորգյան Հ., «Կարիերան ավելին է, քան զուտ աշխատանքը»: -Ե., 2011, 15-20 էջ:
2. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք:
3. ՀՀ կառավարության 2012թ. հոկտեմբերի 4-ի նիստի N 40 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության մասնագիտական կողմնորոշման համակարգի զարգացման հայեցակարգ» և դրանից բխող միջոցառումների ծրագիր:
4. ՀՀ կառավարության 2010թ. հոկտեմբերի 14-ի N 1391- Ն որոշմամբ սահմանված Հայաստանի Հանրապետության ընդհանուր ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկ
5. ՀՀ կառավարության 2002թ. հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ սահմանված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրություն:
6. «Մասնագիտական կողմնորոշման ձեռնարկ», © COAF: -Ե., 2014, 27-43 էջ:
7. Тадевосян А.В., Особенностисоциально-педагогической работы, направленной на профессиональную ориентацию старшеклассников //«Актуальные вопросы науки»: Материалы IV Международной научно-практической конференции,,. (10.01.2012), -М., стр. 101-104.
8. Тадевосян А.В., Основные функции и направления социально-педагогической работы, направленной на профессиональную ориентацию старшеклассников // Журнал научных публикаций аспирантов и докторантов. N 7-8 Июль-Август,/2011, Курск, ООО «Редакция журнала науч. публ. асп. и докт.». стр. 72-74.

9. Трошин О.В., Жулина Е.В., Кудрявцев В.А., ,,Основы социальной реабилитации и профориентации,,. –М., 2005, - с..
10. Пряжников Н., Профориентация в школе, игры, упражнения, опросники. -М., ВАКО, 2005, - с..
11. Handbook on career counselling, United Nations Educational, Scientific and Cultural Organization, Paris, 2002. – p..
12. http://www.careerconsultants.co.uk/career-development-plan/
13. http://www.proforientator.ru/